ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՑ

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1884

ՓԵՏՐՈՒԱՐ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԽԱՐԲԵՐԴ
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. ԵԿԵՂԵԱՑ ԳԱԻԱՌ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՄԱՌՕՏ ԽՕՍՔ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ,
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ Յ. Գ--ւէ՛. Մ՛--. Շ--ո--ւ
ՄԱՏՈՒՈՒ
ՄԻ ՆՈՐ ՆՈՒԷՐ
ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ս. ՀՈՒԻՓ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ
ՏԵՂԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԹԱՆՈՒՅՄՈՒՆՔ

ՉՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԳԷՍ ԱՄՍԵԱՑ

ԺԴ· ՏԱՐԻ 1884 ՓԵՏՐՈՒԱՐ

ԽԱՐԲԵՐԴ

···· թաքադիր,

Գոհունակութիւնս յայտնելով որ դրկածս տարիները հրատարակեր է՛ք, անոնց չարունակութիւնը կը խոստանամ։ Բայց այս անգամ այն ինչ պատրաստած էի բերանփոխի (համը կամ ճաշակը փոխելու) համար «Հէքիաթմը» դրկել, նոր տուիթ մը ներկայացաւ ինձ· ուստի կարեւոր համարեցայ հետեւեալը դրելու եւ անոր հրատարակութիւնը ձգել· Մտածելդ՝ խնդրելու։

Խարբերդէն եկողներ եւ նամակները կը պատմեն թէ Ղուլէ վանքի վանահայր Տէրունի Գէորգ վարդապետը

վախճանած է անցեալներ, որ մի հնարագէտ և բազմաշորձ կամ բազմավորձանք անձն էր։ Հարկ չեմ սեպեր իւր կենսագրութեամբ զբաղիլ, որոյ մէջ բարի օրինակ առնելու բաներ չկան, որոյ անիւները իւր դադարեալ կեանց հետ գլորուեցան ի դուր։ Այլ կան տակաւին խարբերդի ժողովրդեան վորձանք վարդապետներ ալ. որոց բաղդատմամբ՝ Գէորդ Հայր՝ տուրը էր։

Կուզեմ ընթերցողաց և Ազգային տեսութեամբ զբաղիլ սկրողաց ուշադրութեան ընծայել Խարբերդի վիճակին, անոր վանքերը, հանդերձ այլ եւայլ հետաքրքրական տեղեկութիւններով։

Այդ երկիրը երկիցս պատահած ենք և բաւական մանրամասնօրէն ուսումնասիրած ենք. հետի ալ չէ Ակնէն, մանաւանդ գաւառիս վերայէն լինելով, յարաբերութիւն յաճախ կը լինի։ Տակաւին այս վերջին տարիներս եղաւ վիլայէթ, որ իւր ներքև ունի բացի իւր բնիկ և ընդարձակ գաւառէն՝ նաև Մալաթեա՝ հանդերձ Բէհէնիով և Ադիամանով և այլն. կապան Մատէն (արծաթի և ոսկւոյ հանքատեղ), Ադըաման-ով. եայլն. Արաբկեր, Ակն, իւրենց գեղերով ու նահեաններով, իրենն էր նաև Զմիկածագ ու Զարսանճագ, որք յետոյ դրուեցան Տէրսիմի (Թոջաղի) նորակազմ վիլայէթին, Արկն ու Մատէս Ջերմակով, Զնքուշով և Սևերակով, որ վերջերս տրուեցան Տիգրանակերտի վիլայէթին՝ իբրև մերձաւորք անոր. նոյնը կ՚ըսենք և Բալուի համար։

ԽԱՐԲԵՐԴ բուն քաղաքին անունն է այժմ. քաղաքը լերան մը վրայ չինուած, և արդարև բերդաքաղաք է, բայց ոչ «քարբերդ». ինչպէս սովորութիւն եղաւ քանի մը տարիէ հետէ այսպէս կոչել իբրև ուղիղ դիւտ մը, եթէ քարի կամ ապառաժի վրայ բերդ չինուած լինելուն համար քարբերդ պիտի կոչուի, անթիւ բերդեր կան Հայաստանի մէջը այդպէս, որոց կարգէն են վանայ բերդ, Բալուայ բերդ, և այլն և այլն, սովորաբար կը տեսնենք որ ամրոցներ կամ բերդերը չինողներու անուամբ կը կոչուին, զօրաւոր Մուշեղկայ բերդ, Զօրկայ (զօրիկ) բերդ և

այլն, կամ բերդին մերձակայ Աւանի մը, չինի մը անունով, զօրաւոր Մշոյ բերդ, կարասյ բերդ, Հայկն: Միտք չունիմ «խարբերդ» անունը կամ կոչումն հնախօսութեամբ քննելու, չենք հանդիպած հնադոյն մատենագրութեանց մէջը այդ կոչման, բայց քանի մը դարերէ հետէ ծանուցեալ է, միշտ «խարբերդ» գրուելով և բնիկներէն ու օտարներէն ալ նոյնպէս յոլովուելով, և ոչ երբէք «քարբերդ»: Դիտենք նաև թէ խարբերդի հովիտին մէջը, ԽԱՐ անունով՝ Թրքաբնակ գեղ մի կայ մինչև յայսօր, որ հեռի չէ բերդի լերկն ստորոտէն, միթէ հատանական չէ սոսել թէ՝ Աւան եղած լինի ԽԱՐ, և անոր անունով չինուած ԽԱՐԲԵՐԴ, ոչ տարբերէ: Դիւրին գործ չէ հին բառերը և անուանները փոփոխել, երկիւղած լինելու են մեր բանասէրները, դի բառ կայ որ ամբողջ պատմութիւն մ'է: Խարբերդը երկու ընդարձակ հովիտներ ունի, որ կ'անուանուին Ուլուվայ և Գուզուվայ, անմիջապէս քաղաքի լեռնոտնէն կ'սկսի ատոնց տարածութիւնը: Ուլուվան աւելի ծաղկեալ է մշակութեամբ, դրեթէ հող չկայ անգործ, գեղերըն ալ զարդարեալ են ծառատուններով և այգեստաններով: Մէզրէ գեղը մէկ ժամ հեռի քաղաքէն Ուլուվայի մէջը, իբր քսան տարիէն աւելի է որ ՄԱՄՈՒՐ ԱՖԻՒՆ ԱԶԻԶ անունով կը կոչուի, որով և ամբողջ վիլայէթը, հոս է կառավարութեան պաշտօնատունը: Հայոց գեղերը այս երկու հովիտներու մէջն են 120 թուով, Թրքաբնակ և քրտաբնակ գեղեր ալ կը գտնուին: Քաղաքին և գեղերու հայոց թիւը երկու-սեռէն-35676 հոգի: Շատ գեղեր կան՝ որոց բնակիչքը Մոպպա են, հողերը թուրք պէյերուն: Կը մշակուին խաչխաշ (աֆիոն) դեւ քանի մը տարիէ հետէ, շուշմայ, կատաւա, կէնէկերչէ, բամբակ, ցորեն, գարի, Դ ԼՅԸԼ, բրինձ, սիսեռ, ոսպ, լուբիա, բակլա, կաղամբ, և այլ բազում բանջարեղէնք և սեխ, ձմերուկ, Հայլ միրգերը, պտղատու ծառեր առատ, մանաւանդ խաղողն ու գինին շատ շատ: Արուեստներն են կառավարժութիւն, տպագործութիւն (պատմաճի), ներկարարութիւն, խաղտխորդութիւն (տապաղ), և եր-

կրկին պիտոյից համար միւս բոլոր արհեստները։ Զարմանալի աշխատասէր են և չարքաշ, կիները ալ աւելի, դրեթէ բոլոր դեղացիք իրենց ձեռագործ վաստակին է կուտան և կը հագնին։ Մեծ քանակութեամբ ալ ցորեն, բամբակ, ևայլն կը ղրկուին դրսէ գաւառները ի վաճառ։ Կայ նաև չերամաուծութիւն, և թել հանելու ճախարակներ, ու երկու նշանաւոր դործատուն, մինն ի Մեզրէ և միւսը ի քաղաք, յորս Շամի և Հալէպի ապրանքներու նման կերպասեղէնք, հանկոս և էնմոխ և այլն կ'արտադրեն յաջողակութեամբ։

Վաթսուն և երկու եկեղեցի կայ հայոց, և լինն վարժարան, որոց չորսը՝ քաղաքին են, եղած է երբեմն որ քանի մը դեղեր ալ վարժարան անունով բան մը սկսած են, ու գոցած, որ և կը պատահի ցայսօր։ Քանի մը հերձեալ մասեր կան հայոց, բողոքական, կաթոլիկ, լատին, որք կը մրցին դէմ ընդ դէմ իրենց առջև դրուած որսին վրայ, այն է հայոց ժողովուրդը, որք մտաւորական և հոգևորական սնունդէ զուրկ, կէրքի ու կամքի համար կը դիմեն յուսկան։ — մխիթարական է տեսնել որ վերջերս կը պակսի այսպիսեաց թիւը։ Այլ դեռ հոյակապ՝ երկսեռ վարժարանք միսիոնարաց, պայծառ եպիսկոպոսարան դերապայծառին և զուարճալէտ բնակարան լատին փաթերայից հատուածոյ կը կենան իրենց պատուելի բնակիչներով։

Իսկ Հայք ունեցեր ենք և կ'ունենանք սովորաբար Առաջնորդ մը, կամ տեղապահ մը պատրիարքարանէն կարգուած կամ ղրկուած՝ ու գաւառէն ընտրուած, մանաւոր ժամանակի ծանօթ հովիւներն եղած են՝ Աբիստակէս եպիսկոպոս Սամաթիացին՝ Այժմ՝ Այգրիանուպօլիս, Երեմիա եպիսկոպոս Վանցին՝ այժմ ի Վարագ՝ Ահարոն վարդապետ Գէյօղլուցին՝ այժմ Հռոմիոյ մշակ, Կարապետ վարդապետ Բագրատունին՝ այժմ ի Կէտիկ փաշայ, և տեղացիներէն Գեւորս ու Սարգիս վարդապետները, որ միջոց առ միջոց տեղապահ եղած են, իսկ զարդիս Յակոբ եպիսկոպոս ձղնաւորեան Թօխատցին։ Անձ-

նականութիւնք եթէ ծանօթ են ընթերցողայ հերիք է, բան մը չպիտի ըսենք այժմ, բայց կը յիշեցնենք կերդ. պատկ. վարչութեան որ Առաջնորդ և Առաջնորդյու անձանց վրայ լիակատար տեղեկութիւն ունենայ, մեծ տեղ կը բռնէ այս խնդիրը, դի մարդ կայ որ լուսութեան համար կը դատուի, մարդ ալ կայ որ յոյնին գործելով պատուոյ կը հասնի: Ժողովուրդը կույր վստահութիւն մը ունի, կ'ըսէ, երբ պատրիարքարանէ նշանակուած է, արժանաւոր է, ընտրենք: Եւ եկողի քանի մը չլացուցիչ ցոյցերէն կը խաբուի, կը փարի, բայց՞ալ չկրնար ձեռքէն աղատուիլ: Մեկին արժանաւորութեան չկրնար դիմանալ, մեկին ամբաստանութեան ու փառասիրութեանը, մեկին դիւոլութեան և անվայել վարմանց, մեկին տգիտութեան, մեկին աղգասիրութեան, մեկին խոովարարութեան, մեկին բարձրագոյն տաղանդին ու արժանաւորութեան, մեկին ապիկարութեան և անդգայութեան, և այլն տեսակները շատ: Ասոր հակառակն ալ՝ եթէ գտնուին բարեխիղճ առաջնորդներ, բուն իրենց պաշտօնը ճանչցող հաւատա ու խոհեմ վարիչները, կը գտնուին այսպիսեաց դէմն ալ կեղծիչ չօրպաճիները, շահասէր ժողովականները, արժանաւոր կամ անարժան վարժապետները, գիր գրող, ու լրագրաց յօդուածագիրները, կերակուս երէցները, որք նախ կը շրջապատեն ղԱռաջնորդն և իրենց ազդեցիկ լինելը ծանուցանելով, կ'սպասեն հետզհետէ որ իրենց բաժին միայն հետևի, իրենց վրայ երբէք դիտողութիւն պիտի չկրնայ ընել, իրենց պաշտօնը պաշտպանէ, և այլն: Վայ է եթէ հակառակն տեսնուի, ահա դաս մը անոնցմէ կառավարութեան առջև կ'սկսի պարսաւել և անհատատարիմ ցոյց տալ զայն, դաս մը դռուռմ դոչռմ կը ձգեն լրագրաց մէջը, դաս մը՝ ժողովրդոց մէջ կը շրջին դայթակղութիւն ցանելու, դաս մը ևս Մահսերները կը շրջեցնէ և բռտուար ստորագրութեամբ ի Պատրիարքարան կը ղրկէ, հեռագիրները կը տեղացնէ: Կը ճանչնայ պատրիարքարանն այդ ստորագրողները, կը ճանչնայ խմբագիրն իրենց

պրոլները, գանե ճանչնան Աստուածնորդի անճնաւորու-
թիւնը և յատկութիւնները, բաւական կը դիւրանայ դա-
տաստանը։ Դան ուրիշ կողմեր ալ նկատադրելիք այս խնդ-
դրոյն, թ դիշերօթիկ կամ հեդրանական վարժարաններ
բանալը կամ բանալու առաջարկները Աստուածորդի կոչ-
մանե, կառավարութեան առջև գտեհիկ կռիւները յա-
րուցանելու և յաչս ռամկին լուսաւորիչ ու նահատակ ե-
ղեցնել դինքն, մինչև եպիսկոպոսութիւն մը կորզել ու
ապա բարձրագոյն վիճակի մը աչք անկել, մայրաքաղա-
քը դիմել։ Ժողովրդեան սուակն ու ժողովրդեան մարդն
ընե ամէն բան, ու վարդապետան պարծենայ թէ ես ըրի։
Սատա համաւսւ հանե երդազական բաղձանքներու, ինչն
խորհրդական է այս և այն մեծանուն մարդոց ու մարմ-
նոց, հրահանգներ ունի ծանծկեալ, նպատակներու վրայ
կը խորհի, այլ և այլ դիւանագիտաց և դահլիճներու
հետ խօսք և գործ ունի . . . Քալէ հա քալէ . . . ։ Ժո-
ղովուրդն ալ «Հայը, Հայը, կառքդ իսրայելի և հեծեալք
նորա» կ'աղաղակէ բերանաբաց այսպիսւոյն եռանդն։ Ջը-
գենք միւս կողմերը։ Բայց իրօք Աստուածորդ մի ինչ է,
նախ եկեղեցական կամ կրօնաւոր մի է, և ապա տեսուչ
եկեղեցւոյ ու եկեղեցականաց, օրինաց, ծիսից և դա-
ւանութեանց հսկող, բարեկարդիչ բարուց, տեսուչ վար-
ժարանաց, դատաւոր ամենախառն դատերու, նախա-
դահ ամենայն ժողովոյ աղդին, գործադիր որոշմանց ժո-
ղովոյ, անդամ Խորհրդի կառավարութեան և ներկայա-
ցուցիչ աղդին՝ առաջի իշխանութեան և առաջի ամենայն
աղդաց, այցելու և այցընկալ աղդայնոց և օտարաղդաց,
վանահայր ի վերայ վանահարց, իրմէն կը պահանջին Աս-
տուածային քարոզ և իրատագիտութիւն, խաղաղարու-
թիւն և դատախազութիւն, քաջութիւն և հեզութիւն, մխամտու-
թիւն և խորամանկութիւն, անկեղծութիւն և կեղծաւորու-
թիւն, որ մեկն ըսենք, սահման մը գծած չկայ իր պաշտօնին,
և որովհետև չկրնար հասնիլ ամենուն, ուրեմն կ'անցանեն
իր վստակը, կամ ինքն խոյս կուտայ կամ խոյս տալ
կուտան իրեն։ Ջենք օգտիր այսպես։ Քանի մը տարի

յառաջ խնամարհաբար առաջարկ մը եղաւ մեր կողմանէ Պատրիարքարանին, թէպէտև մեզմէ յառաջ կարայդ, որպէս զի կառավարութեան վիլայէթի եղած տեղերը մեծ Ազգնորդութիւնք լինին և նոյն վիլայէթի ներքև եղած գաւառներն ալ իրենց անոր մասերը՝ նոյն Ազգնորդութեանց ենթարկուին, բնականաբար իրենց բոլոր տեղական և քաղաքական խնդիրները վիլայէթներու հետ՝ սրն են, թող աղգային խնդրոց համար ալ իրենց կեդրոնն այն լինի։ Մեծ Ազգնորդութեանց կարգուին փոքր և համբաւաւոր եպիսկոպոսներ, իսկ գաւառները՝ սոսկ վարդապետ կամ քահանայ, որոց պատասխանատուութիւնը՝ թէ վարչական, թէ եկեղեցական, թէ վարժարանական, թէ տնտեսական, թէ վանականք ալայլն, բոլորն ալ պահանջէ եպիսկոպոսն և կարգադրէ իր քովէն ունենալով քաղաքական, կրօնական, ուսումնական, տնտեսական, վանական ալայլն, ժողովները ու վիճակամայն իր գործառնութիւնք տեղեկագրելով Պատրիարքարանին։ Կը կարծէ՝ լինք թէ ասով էնդնկները կը պակսէին, խարէութիւնք գոնէ կը նուազէին, և բուն կեդրոնը շատ ժամանակ կը վատակէր հանրական կենսական խնդրոց վրայ խորհելու։ յատուկ նշանակեցինք ալ և ցոյց տուինք այդ կեդրոններն ու անոնց ենթարկու ելիք գաւառները։ Ձմեռը միտքս չգար, և ես չէի ուզեր այսքան ալ գրել։ Բայց, որովհետև, ընթերցող, մեր ուշը գրաւած է մի ընդարձակ և խիստ արդահատելի վիճակը, Խարբերդի Ազգայնոց, որոյ նման են դժբաղդաբար նաև շատ վիճակները, կ՚ուզեմ որ դարման մը մտածուի մեր գաւառացի խեղճ ու լքեալ ժողովրդեան գոնէ մտաւոր և հոգևոր կենսոյ միջոցներուն համար, և արդէն լսուած ալ է թէ Ազգնորդութեանց կարգադիր յանձնաժողով մը կայ այսօր ի Կ. Պոլիս։

Կը տեսնուի նախնեաց թողած հետքերէն գաւառ մը իր ծաւալման և բնակչաց համեմատ վանքեր ունեցած է, որոյմէ մինն անուանած է Աթոռ, այն է գլխաւոր վանքը և հոն կը նստի եղեր եպիսկոպոսն, միւս-

նները ծառկը այն եղեր դիրք դրելու, աղօթանոց, եկե-
ղեցականութեան մէջ հրահանգուելու, այսու աստիճա-
նաբար կը կրթուին ու կը պատրաստուին զանազան կո-
չումներու, և անոնց մէջէն կը գործածէ եղեր եպիսկո-
պոսն գեղերուն ու թէմին համար քարոզիչ, ուսուցիչ,
նուիրակ (որ և պատուիրակ), ու աւելի յառաջադէմնե-
րըն ալ Առաջնորդ գաւառաց կամ յայորդ յետ իւր:
Անշուշտ ասոր համար այնքան վանքեր կան երկնկա, Դեր-
ջան, կարքն, Մուշ, Աղրատատ, Սիւնիք, Վան, Սեբաս-
տիա, Եայլն: Կ'ընդունիմ թէ մաս մ'ալ անկեղանոց ու
աղքատանոց են եղած: Անշուշտ այն վանականաց առա-
քինութեան և ծառայութեան փոխարէն է որ այնքան
պաղէ, մատաղ, զանազան նուէրք, խոստմունք, կտակք,
գեօղք և կալուածք յօժարակամ թողած են նախնիք
այդ հաստատութեանց, որոց հաւատացած են շատ ան-
գամ նաև իրենց ողջ անձը և ամբողջ գանձը: Նախախ-
նամութիւնը՝ շատը այդ վայրերէն պահեր է անփորձ մեզ
համար ցայսօր, բարբարոսութիւնք չէն կրցած ջնջել, և
պետութիւնք՝ ի մէջ այլոց աթժանայիշատակ Սուլթանք
Օսմանեան յատուկ հովանաւորութիւն տարած են չէն
պահելու, ոմանց համար ալ հրովարտակներ շնորհած են
յատուկ:

Աբդ վանքերէն կրնանք օգուտ քաղել, կամ վանք-
րը կրնանք Աղգի օգտին ծառայեցնել, ժողովրդեան հո-
գևոր և մտաւոր կրթութեան ընծայելով: Ես կ'ըսեմ կը-
նանք, եթէ ՄԱՐԴ լինինք, եթէ ՄԱՐԴ ունենանք: Աբդ-
եօք Աղգի վրայ մտածողները գիտեն թէ շատ մը վան-
քերու հողերէն ու կալուածներէն սեպհականներ են ան-
խեղճ վանահարց ոմանց աղգականները ու բարեկամնե-
րը, մաս մ'ալ այլ և այլ անձինք ասոնք տեսնելով՝ իրա-
ւունք համարած են իրենք ալ ուրել, և միթէ այսպէս չէն
ըներ շատ տեղերը դեղ կամ քաղաքի եկեղեցականները՝
իշխանութեանց եկեղեցւոյ դանձն ու սահմանած ջրը,
ով կրնայ համար պահանջել կամ դատել ջրենք: Որ-
քան խաչեր, մատուռներ, աւետարաններ, ընտիր ձե-

ռադիները, զանազան հազուագիւտ հնութիւնները ընծայ տրուած, վաճառուած, յումպէտս մխուած Ազգայնոց և այլազգեաց, գրեթէ պարպած են ու կը պարպուին հետզհետէ վանքեր ու եկեղեցիները այդ պատուական և անգին նիւթերէ։ Եւրոպացւոց գնողները, աւազակութեամբ աւարողները, զանազան ուղևորները տարուկեցին մեր վանքերը։ Անոնց վրայ աւելցուր նաև կարգ մը սրբազան և հայր սուրբ այցելուները, չլչող ուսումնականները, որք հետաքրքրելով և երկաթելով եղածները, վերցուցած են չատ մը բաները։

Դեռ քանի մը տարի յառաջ Ռաղեշոյ խնդրակատարի վանքը կողոպտուեցաւ մեծագին դանձերով՝ լեռնային հրոսակներէ։ Երբ Մշոյ Առաքելոց վանից վանահայր էր գրկաթոռն Մկրտիչ Վ. վանքին խաչեր, մատունքներ և աւետարանները զրած էր հայոց ու տաճկաց ձեռքը դրուաւ, ու պարտք ըրած էր, յորս կար նաև սրբոց Ղևոնդեանց մատունքն։ Այս անձն նոյն վանքին ընտիր ու անման երկաթագիր մեծագիր երկու հատընտիր մագաղաթներու վրայէն մկրատով կտրեր էր թուղթոց և ծագկանց պատկերները՝ հետը հանելով միւս երեսի գրերն ալ, տղայի պէս իրեւ խաղալիկ ատլով տուր ու առ, տրտերն ալ գրաւ, ու ինքն գինի խմելով։ Ձի հեծնելով անհամեստութեամբ կը յօրանայր։ Այս անձն այժմ վանահայր է մշոյ Ս. Յովհ. վանից կեդր. վարչութենէն կարգուած՝ քանի մը տարիէ ի վեր, և թէ ինչեր ըրած է հոս ալ ու կ'ընէ, չեմ ուզեր պատմել։ Այս վանքն ևս քանի տարի յառաջ մեծ կողոպուտ մը տուաւ քրդաց։ Այս վանքէն կորզած է Տիգրանեան Մ. եպիսկոպոս այն խաչը, որոյ հրաշագործութեամբ ինքն ևս հիւանդէն հաչակեալ է։ Այս սրբազանին ձեռքով կը հատատանի թէ՝ Աբղնու բարձր, Աստուածածնի վանքէն, Ջնբուշի վանքէն, Բալուայ վանքէն, Ախթայ վանքէն, վերջապէս ուր ձեռքը հասեր, հինր անուններ, կամ «իբր նչխարեալ օրերը հոն անցանելու» պատրուակաւ ամէն բանը ձեռքէ անցուցեր, ուզածը վերցուցեր, ու կ'ըսեն թէ Աւանգ մը

ունի ձգած Միքայէլեան, և կանանչ սեղեակ մի ունի Տիգրանակերտ կղզուած, յորում արկղերով կը պահուին հին ձեռագիրք, մասունք, զգեստք, և այլն։ Մշոյ ուրբ Կարապետի վանքին վրայ երկաթօրէն պէտք է գրուի։ Եւ բիդոյի Ս. մեծին Ներսիսի վանքն գնացինք և սրբոյն չիլիմին փաթելէս գինի փափաքեցայ մասունքը համբուրել, խաչը բերին, բայց ապակիի տակէն մասունքը գոյացած էր, ներկայ էր Հայեակ Սրբազանն, որ մէկն ըսնք։ Գանք խարբերդու վանքերը, և ոչ աւերակ խաները այնպիսի վիճակ մը ունին, ինչ են ունեցեր, և ինչ ունին, հողերը ընտիր և շատ, մարապաներու ձեռքը. իսկ մատեանք և անօթները ու զգեստները իրր թէ մաս մը Պետրոս վ. ի քով, մաս մը Սարգիս վ. ին, մաս մը գեղերը և մաս մը քաղաքը կը պահուին։ Հողեր և արդիւնքները պիտի գրեմ։ Բողոքականաց և այլոց ձեռքով այս աշխարհէն շատ ձեռագիրք և այլ բաներ դնուած ու եւրոպացւոց վաճառուած են։ Ես կը կարծեմ թէ հարկ է յանկ մը չինել ամէն տեղ գտնուած ձեռագիր մատենից, սուրբ մասանց, և այլ նիւթոց ու կալուածոց վանօրէից և եկեղեցեաց, ու ամէն գաւառագլուխը մի վանք կամ եպիսկոպոսը ժողովել նիւթերը, և անոնց ու կալուածոց հսկողութիւնը յանձնել այդ հեղրոնի հոգածութեանը։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՋՏԵԱՆՑ

Շարունակելի

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵԱՑ ԳԱԻԱՌ

ՄԱՍՆ Ա.

Սահման. — Եկեղեաց գաւառը, որ նոյնն է ընդ այժմու Էրզնճան գաւառակին, սահման ունի ի հիւսիսոյ գետն (մանր հնոյն Առիւծոյ), ի հիւսիսոյ և յարևելից Դերջան, ի հարաւոյ Գոռնէն, Մէրճան, Օվաճըգ (մասունք հնոյն Մնձուրոյ և այժմու Ցէրսիմի), իսկ ի հարաւոյ և յարևմտից գետն (Գարասնաղի) և կէրճանէս (մասըն հնոյն Առիւծոյ)։ Այժն կողմերէ բարձրաբերձ լեռներէ չրջապատեալ գրեթէ եռանկիւնաձև կամ երկար ձուաձև դեղեցիկ դաշտ մ'է այս գաւառն, որ իւր արդաւանդութեամբ անուանի եր և ի հնումն. արևելքէն յարևմուտս իւր մեծագոյն երկայնութիւնն է 40 քիլոմեթր և մեծագոյն լայնութիւնն իբր 20 քիլոմեթր եթէ 4 քիլոմեթրն հաշուեմք մէկ ժամ կամ երկու մղոն։ Եփրատ գետն Դերջանէն գալով՝ խաղաղիկ ու մանուածապատ դնացիւք կը սահի մ'անցնի արևելքէն յարևմուտս ընդ երկայնութիւն դաշտիս, զոր և յերկուս մասունս կը բաժնէ և կը մտնէ կամախ։ Գաւառին միջին բարձրութիւնն է ծովու մակերեսէն 1350 մեթր, այն է խորբերդու, Մշոյ դաշտերէն աւելի բարձր։ Եկեղեաց գաւառագլուխ եղող Երիզու կամ Երզնկա քաղաքին հեռաւորութիւնն է ի հարաւոյ իբր 144, Բաբերդէն 72, Շապին-Գարահիսարէն 96, կամախէն 40, Ալնէն 120 և վերջապէս Տրապիզոնէն 198 քիլոմեթր։ Գաւառիս աստեղագիտական սահմանն է 37° 10′, 36° 54′ արևելեան երկայնութեան փարիզու և 39° 55′, 39° 30′ հիւսիսային

լուսնութեան։ Այս ընդարձակ հովիտն ունի երեք դըլխաւոր կիրճ, ընդ որս միայն կարելի է սայլիւք վոխադրութիւն կատարել. առաջինն է ձիպէճ, որ անցք կը տայ դէպ ի Գերջան, երկրորդն Ջոթոխը, որ մուտք կը տայ դէպ ի Կէօճանկա, իսկ երրորդն փէնախ-Պէղազը, որ կ'առաջնորդէ ի Համանուն գաւառակն. միւս կիրճերն շատ բանուկ ու անուանի չեն։

Լէյնէ. — Եկեղեաց գաւառը շուրջանակի պարփակող լեռներն Անտիտօրոսի ճիւղերն կը համարուին, որք ծցեալ են ի հարաւոյ Տէրսիմի բարձրաբերձ ու բազմակոհակ լերանց։ Աչեւմեան սահմանին վերայ կայ խրոխտըն ու նուիրական Գոհանամ լայնաձիգ լեռ, իբր 2400 մեթր բարձր, որ կ'անջրպետէ մեր գաւառն կամախէն և իւր երկու որոշ ու ամպածրար գագաթամբք, Գոհանամ և Սնպոհ, կ'իշխէ Եկեղեաց գաւառի արեւմտեան հորիզոնին վերայ։ Այսպէս՝ ըստ տեղացւոց վկայութեան ու յորջորջման, և հակառակ ոմանց կարծեաց, ուրոյն գագաթունք են Գոհանամ և Սնպոհ՝ միևնոյն լեռնաշղթային, առաջինն դէպի հիւսիսային արևմուտք, մերձ ի նշանաւոր վանս Ս. Լուսաւորչի, երկրորդն դէպ հարաւահառն արևելք և ցածագոյն քան զայն, մերձ ի մեծաստանն Ս. Թադէոս վանուց (Ս. Թադէոս և Բարթողիմէոս)։ Եկեղեաց գաւառը չրջապատող լերանց ամենեն չրաշատն, պարարտաբուծն ու ծաղկալիցն այս բարձրաւանդակն է որ հղօր վտակներ ու եփրատայ օժանդակներ կ'արձակէ ընդ արևելս ի մեր գաւառն և ընդ արևմուտս ի կամախ։ Այս լայնանիստ լերին արևմտեան գառիվայրն որ սահմանն է կամախու, մանաւանդ Ս. Լուսաւորչի և Աւագ վանուց չրջակայքն անտառուտ է, յորս կը գտնուին դէպ, ցրդի, եղևնի, մայր և կաղնի, իսկ հիւսիսային ու արևելեան գառիվայրներն, սահման Եկեղեաց, ուրեք ուրեք նոսր պուրակներ ցրուեալ են և ըստ մեծի մասին անփայտ բոլորովին։ Գաւառին հիւսիսային պատուարն կազմող երկայնաձիգ չղթային բարձր գագաթներն են Ջոթոխը, Աք-Ցաչ և Սըքնէոլ (ըստ ոմանց աղաւաղեալն Ս. Գրիգոր ա-

նուան) որ կը տրոհեն մեր գաւառն ի Քէլքիտա։ Սրնգորի մշտատեւ գագաթն, ընդ որ կ'անցնի մեծ ճանապարհն Տրապիզոնի յԵրիզա, իբր 2,800 մեթր բարձր ծովու մակերեսէն, կը թուի լինել բարձրագոյնն բոլոր շրջակայ լերանց, որք իբր հղօր ու յաւիտենական պարիսպ կը պատեն Եկեղեաց խորաձոր հիվիսը։ Ուրիշ գագաթներ Տաւէան (ինչպէս գոյգ կը տայ մեզ Հ. Քիբերթի աշխարհագոյնն արեւմտեան-հիւսիսային Հայաստանի, պատրաստեալ ի Պերլին 1877, Թուրքօ-Ռուսական պատերազմայ համար) Քեղնէ-Տաղ, Սոբը-Դայ, Մելիքեէդ կ'անջատեն զԴերջան յԵկեղեաց գաւառէ արեւելահարաւային կիսաշրջանակով։ Հոս լեռներն կը թուին ճեղքուիլ կամ պատառուիլ եփրատայ անցքը (Քէղէճ) գործելու համար ի Դերջանայ դէպ ի մեր գաւառն։ Իսկ Եկեղեաց գաւառի հարաւային աղեղնաձև սահմանն գծող լեռնաշղթայն, թէև բազմակոհակ և լայնաձիգ, բայց ոչ այնչափ բարձրաբերձ է մեր մօտ։ Նշանաւոր գագաթունքն են Մերճան-Տաղ, Ղալաճ-Ղայա (Մթին լեառն ի հնումն), որմէ ետք լեռնաշղթայն յանկարծ նորէն կը բացուի և անձկագոյն ու խոր կիրճ մը գործէ, ընդ որ կ'անցնի ալեձև եփրատ և կը մտնէ Դարանաղեաց գաւառը։ Սոյն այս հարաւային շղթայն կրնայ առաջին աստիճանն համարուիլ այն լայնատարած լեռնագաւառին (Տերսիմ), որ աստիճանաբար կը բարձրանայ ամեն կողմէ ընդ մէջ Եկեղեաց, Դարանաղեաց, Փոքր Հայոց, Ծոփաց, Բալահովիտի, Խորձենայ և Դերջանայ, և կը կազմէ նոր Զուխերի մ'ի Հայաստան։

Սոյն լեռնաշղթայք, կամ գոնէ սոցա դէպ ի մեր գաւառն հակող զառիթափ կողերն անփայտ են և բնաւին մերկ, մի քանի ծմակաց մէջ տեսնուած ցանցառ ծառերն կը ցուցընեն սակայն թէ երբեմն համակ ծածկուել էին անտառներով, զորս քնակչաց անհեռատեսութիւնն չնչել է արմատաքի, այնպէս որ իբր պատուղ սոյն անխոհեմութեան, այժմ երիզագիք չատ սուղ կը գնեն փայտն, որ 8-10 ժամու և մերթ աւելի հեռաւորութիւն ունեցող վայրերէ կը բերուի և գամ քան զգամ պիտի թանկի, այն

տատիճանով որ անտառները հեռանան։ Բայց եթէ տեղական կառավարութիւնը կամ բնակիչք կամք ունենան, կարող են, ոչ միայն նախնեաց դործած սխալն դարմանել՝ ի նորոյ անտառ անկելու ակնկալով, այլ այսու հարստութեան նոր աղբիւր մը ստեղծել։ Եթէ այսօրուընէ սկսի այս անաչխատ դործն, յետ ոչ երկար ժամանակաց, լեռները, հովիտք, ձորք, բլուրք և զառիթափք համակ կը ծածկուին ամեն տեսակ ծառոց անտառներով, որք, մեռս կողմանէ, կը դեղեցկացընեն երկիրն, կը մաքրեն ու կը զովացընեն դաշտին օդն, որ յամառային տապադին է ու ժանտաժուռ։ Դաշտին արևմտեան ու հարաւային չղթաներն արօտալից են ու ծաղկալից և ի գարնանի ամբողջ զառիթափ կողերն կը տեսնուին ի դեղ դալարոյ, մանաւանդ արեւելով չվենականաց և վրանաբնակ Քրդաց խաշանց ու անդեաց պաշտատ մարդ, հիւթալի խոտ և անուշաբոյր ծաղիկներ, մինչդեռ հիւսիսային չղթային կողերն, դանդ քան մեծի մասին, ցամաք ու ապառներ են և շատ տեղեր հրաբխային նիւթերով ծածկուած։

Ընկերական կընիքն, Երէց։ Ս. ԱՄԱՏԵԱՆ

(Շարունակելի)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ*

Զմիւռնիա, 14 Յունուար 1884։

Ամենապատիւ սրբազան Հայր,

Ձեր Սրբազնութեան 1883 դեկտեմբեր 31 թիւ և 423 համար դրութիւնն, ըստ յանձնարարութեան Ձեր՝ տեղւոյս Գաւառական ժողովոյ ուշադրութեան յանձնեցի, և որոյ պատասխանագրի պատճէնն ներկայիս կը հաղորդեմ Ձեր Սրբազնութեան։

*Տե՛ս երես 46։

Գերապատիւ Տէր Մելքիսեդեկ սրբազան Արքեպիսկոպոս Մուրատեանց նախագահ Ազգային ժողովոյ Զմիւռնիոյ։

Սրբազան Հայր,

Զմիւռնիոյ վիճակին Գաւառական ժողովը իր Խե. նստին մէջ նկատողութեան առաւ Ամեն. Տ. Ներսէս սրբազանին կողմէն 31 դեկտեմբեր 1883 թուականաւ և 423 համարաւ առ Ձերդ սրբազնութիւն յղուած պաշտօնագիրը, որով իմաց կը տրուի մեզ թէ Ազգային ժողովը անընդունելի կը նկատէ Գաւառական ժողովին այն որոշումն, որուն համեմատ Մեծ. պարոն Պասիլ Պալօեան արձակուած է իր երեսփոխանական պաշտօնէն։

Վիճակիս Գաւառական ժողովը այս անհակնունելի տնօրինութեան օրինական սեպուած պատճառները և բացատրութիւնները խորհրդածութեան և լուրջ վիճաբանութեան մը մատչէն անցուցեալէն և Սահմանադրութեան 69 և 70երորդ յօդուածներուն թէ առաւական և թէ իմաստասիրական ոգին նկատողութեան առնելէ ետք չկրցաւ Ազգային ժողովոյ հետ համաձայնութիւն ունենալ, և

Նկատելով թէ Սահմանադրութեան մէջ չկայ յօդուած մը որմէ Գաւառական ընդհանուր ժողով մ'արգիլուի իր ընտրած երեսփոխանը հրաժարեցընելու երբ դադրի անոր վրայ վստահութիւն ունենալէ,

Նկատելով թէ վիճակի մը կողմէն ընտրուած երեսփոխան մ'որքան որ ընդհանուր ազգին երեսփոխանը նկատուի, իր երեսփոխանական ամբոխը կը պարտաւորի մի միայն զինքն ընտրող և այս ամբոխը իրեն ընծրհող գաւառին և չէ թէ Կեդրոնական Ազգային ժողովին, և հետևաբար կը պարտաւորի նաև ոչ միայն ընդհանրապէս ազգին, այլ նաև մասնաւորապէս զինքն ընտրող վիճակին շահերը պաշտպանելու, և այս պարտաւորութիւնէ արտադրուող պատասխանատուութեան ներքև դանուելու,

Նկատելով թէ գաւառներէն և Կ. Պոլսոյ թաղերէն ընտրուած երեսփոխանաց հինգերորդ մասն երկու տարին անգամ մը փոխել և նորոգել հարկ է ըստ Սահմանադրութեան, և թէ Ազգային ժողովը իւր երկրորդ տասնամեայ շրջանը լրացուցած և երրորդը մտած է, առանց իւր անդամոց մէկ հինգերորդ մասն երկու տարին անգամ մը փոխելու և նորոգելու, կանոնազանցութիւն որուն ընդհիւ միայն գաւառիս վաղեմի երեսփոխանը կրցած է պաշտօն վարել մինչև 1883 նոյեմբեր 23, և որուն պատճառաւ գաւառիս Ընդհանուր ժողովը իւր ապագայ գործոց համար, աղբանքաւորութեամբը, ապագութեամբը և արդարութեամբը իւր յարգը համարուած վայելող նոր երեսփոխան մ'ընտրելու իրաւունքէն զրկուած է,

Նկատելով թէ այժմեայ Ազգային ժողովը Սահմանադրութեան 69երորդ յօդուածին կիրառութիւնը անտես առնելով՝ իւր հաւաքական և մէն մի երեսփոխանին անհատական պաշտօնավարութեան չէ թէ տասնամեայ, այլ յաւիտենական չրջան

մը տուած, և այսպէս մոռցած է իր ամեն ընտրողաց իրաւունքը, որ է ազգին այժմեայ յառաջադիմութեան և ՅՕրէ յաղուածի տրամադրութեան պահանջմանց համապատասխանող նոր ե- րեսփոխաններ ընտրել,

Նկատելով թէ Մեծ. պարոն Պապի Պաղտեանին երեսփոխա- նութենէ արձակման խնդիրը չէ թէ միջոցէս մ'է, ինչպէս կար- ծուեր է պաշտօնագրին մէջ, այլ ամբողջ գաւառի մը Հայոց օ- րինաւոր ներկայացուցիչներուն կողմէն համահաճ հաւանու- թեամբ և անդառնալի կերպով տրուած որոշում մ'է, որ վիճա- կիս ընդհանուր շահուց կ'պահանջի,

Նկատելով որ այս որոշումն հետևանք է Գաւառական ժողո- վոյ մէջ տրուած անվստահութեան քուէի մը, որուն պատճառ- ները յայտնել խոհեմութիւն չենք համարիր, քանի որ ատոնց յայտնութիւնը կրնայ անախորժ հետևութիւններ ունենալ վի- ճակիս վաղեմի երեսփոխանին նկատմամբ,

Նկատելով թէ Ազգային ժողովոյ ատենական կանոնագրու- թիւնն անոր ներքին լարեկարգութեան, ժողովականաց կար- գապահութեան և վիճաբանութեանց օրինաւորութեան կը վե- րաբերի միայն, և չէ թէ Գաւառական ժողովին իրաւանց, և վստահ ըլլալով որ Ազգային Ընդհանուր ժողովը իր արդարա- սիրութեան և խաղաղասիրութեան հաւատիքը պիտի տայ ոչ ևս վարանելով գործադրելու այս արդար և օրինաւոր որոշումը,

Ձմիւռնիոյ գաւառական ժողովը նախ կը խնդրէ Ձեր Սրբա- զնութենէն որ հաճիք ծանուցանել Ձեռնհաս իշխանութեան թէ Մեծ. պարոն Պապի Պաղտեան 1883 Նոյեմբեր 23է ի վեր դադրած է վիճակիս երեսփոխան ըլլալէ, և թէ եթէ Ազգա- ին ժողովը չարունակէ զնա նկատել իբր երեսփոխան, ըստ սահ- մանադրական տրամադրութեանց, ապօրինաւորութեամբ և ան- վաւերութեամբ արատուած պիտի նկատուին Ազգային ժողո- վին մէջ այսուհետև տրուելիք որոշումները, եթէ երբէք անոնց քուէարկութեան մասնակցի պաշտօնէն արձակուած երեսփոխան մը, մասնակցութիւն որ բոլորովին անհաւատալի է. երկրորդ՝ խորին ցաւ կ'ըզդայ տեսնելով որ Ամեն. Ներքս Սրբազանն յիշեալ պաշտօնագրին ներքև իբր տոորագրութիւն իւր անունը միայն դրած է փոխանակ զայն տորագրելու իբր Պատրիարք կ. Պոլսոյ:

Մնամք խորին յարգանօք ի դիմաց Գաւառական ժողովոյ

12 յունուար 1884 Ատենապետ ԳՐ. ՋԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Ձմիւռնիա: Փոխ–Ատենադպիր Ս. ՊԱՊԻԼԵՐ

Ձոյն զայս պատասխանագիր Գաւառական ժողովոյ տեղւոյս հաղորդեմ Ձերդ Սրբազնութեան առ ի տեղեկութիւն, և մնամ որպիսական խոնարհութեամբ Առաջնորդ Ձմիւռնիոյ

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Առ Ամենապատիւ Տ Ներսէս Ս. Արքեպիսկոպոս բարեխնամ Պատրիարք Հայոց և Նախագահ Կեդրոնական Ազգային ժողովոյ ի Կոստանդնուպոլիս:

ՄԻ ՓԱՆԻ ՀԱՄԱՌՕՏ ԽՕՍՔ*
ՀԱՅՑ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ ԹՈՂԼԻՍ ՓԱՂԱՔՈՒՄ†

(Անյնական փաստաթղթեր)

Սրանից 15-20 տարի առաջ՝ երբ մեր Ռուսաստանի հայերի մեջ գործից ազգայինը դժգոհանքը և ամենուրեք ձևանչին հիմնել ուսումնարաններ, տարած էլ լսող էինեք, սովորել մայրենի լեզուն ու խոսել հայերեն — այդ միջոցին խոկ Թիֆլիզումն էլ հազվագյուտ մի խումբ թատերասէրներ, որ կամենում էր կանոնաւոր ներկայացում ներ տալ։ Ուստի 1812 թուականին՝ գիշատչով թագաւորելին վարչութեան մէջ ներդաշնութեանը նորին կայսերական

Ինչպես որ վերնագրիս կ'երեւի՝ այդ յօդուածը Թիֆլիսի մէջ երբեմն տեսնուած թատերական գործունէութեան վրայ մի տեսակ իշատակագիր է։ Թէեւ այս միջոցիս չունիմ բուն ալգային թատերական ներկայացումներ՝ որպ ոչ ոք այդ իշատակագրին օգնած քաղեն հայ դերասան եր։, բ։ եւ զանազան պատճառներով դադրած է այժմ բատերական խաղերս եւս ունիմ, որ երբեմն այնքան կ'ուզէր բ։՝ կ. Գալով եւ բ։ կվկատ ա հայ երիտասարդութեան սիրոն ու երեւակայութիւնն, սակայն ան օգնած չենք համարիր, քան խնդրոյ ներկայիս, Պ. կ. Բրիտոմեանի, որ այժմ Ն բլի, յիշատակ, կ'յուսանի, յօժարակամ ներ տարակել իր անձնական տեղեկութիւններն, ոչ միայն անոր համար որ կրնան ներդրել բատերական բնութեան, այլեւ դերասանական արհեստին վրայ Պ. Բրիտոմեանց լաւ եւ բազմաւոր դիտողութիւններն եւ ան ակնկալ ոգով նկատուած հայ դերասաններուն մասին գծած սկարագիրներն հայ բատերական պատմութեան վրայ նոր լոյս մը սփռելու պէտ որ օգնեն։
Ծ. Խ.

†Ընդհանուր նկարագիրը Հայ բատրոնի բ։՝ Ռուսաստանում, բէ Տաճկաստանում չատ տեղեկութիւն նկարագրուած է Փոչ ամսագրում։

Քարձրութիւնը՝ կովկասի փոխարքայ մեծ իշխան Միքա-
յէլն բարեհաճեց յարդելու հասարակութեան խնդիրքն
և թող տուեց շաբաթական երեք ներկայացումներ տալու
քաղաքային թատրոնում և ապա անմիջապէս սկսուեցան
ներկայացումները՝ որոնք մեծ ընդունելութիւն գտան,
բայց դժբաղդաբար այս անգամ ևս ազատ չկրնացին մեր
աղգային յատկութիւնից և անյապաղ մտցրին գործի մէջ
կուսակցական ոգին ու այդպէսով ի հարկէ գործը շա-
տով խափանեցին։ Պարտք եմ համարում այս տեղ հա-
յտնել յիշել նոյնպէս այն հանդամանքն որ գործի խա-
փանման շատ նպաստեցին, պատմական պէսոնները, որոնք
զանազան անհեթեթ ցոյցերի պատճառ սրդիլուեցան
և որոնք առանձնապէս դրաւում էին հանդիսականների
այն ժամանակ։ Արդեօք երբ պիտի մենք հրաժարուինք
աղգային բաներիս մէջ անմիտ կորստաբեր ցուցամոլու-
թիւնից։ Ա՛յն օրից սկսուած տեղւոյս հայ թատրոնը մօ-
տաւորապէս 15 տարի խեղճ ու կիսամեռ կեանք վարե-
լից։ Վերջապէս Թիֆլիսի զարդացած հասկացող մասն
սթափուեցաւ, ղղայ կարևորութիւն ունենալու օրինաւոր
ներկայացումներ և իրրև ժողովրդեան այդ մասի արտա-
յայտիչ՝ նորոդ հանդուցեալ իշխան Թումանեանցը, որը
երբեմն փառաւորապէս կառավարել էր քաղաքային
թատրոնի իտալական օպերան — ձեռք զարկեց գործին,
սկսեց փող հաւաքել հայկական թատր հաստատելու և
կարճ միջոցում հասաւ սաստրագրութիւնն 8,000 ռուբլու։
Թէպէտև ցաւօք սրտի ասելու է որ ամբողջապէս չհաւա-
քուեցաւ, որովհետև ոմանք անտեղի պատճառաբանու-
թեամբ ղլսցան վճարելու ստորագրած գումարը։ Ա՛յն
անձինք, որոնք սիրով մասնակցել էին հանդանակութեա-
նը, անուանեցան հիմնադիրք և իշխան Թումանեանցի
առաջարկութեամբ հաւաքուեցան և ընտրեցին իրանց
միջից մի մանաժողով, հինգ անձերից բաղկացած, որը
պիտի հոգար թատրոնի ամեն տեսակ պիտոյքներն, և մի
և նոյն ժամանակ առաջարկէր միջոցներ ապահովելու հայ-
կական բեմի գոյութիւնը ապագայում։ Հարկ է այս տեղ

յիշել նաև որ այդ ժամանակամիջոցին իսկ Պ. Գ. Աբծրունեն հիմնարկեց իւր կարուսանատոյսում մի միջակ թատրոն այլ և կարծած էին թէ շատ յարմար և ձեռնտու կը լինի մեր ներկայացումների համար, բայց չը տևողեց, ինչպէս կը տեսնենք իսկոյն։ Վերոյիշեալ մատնաժոդովը այս անգամ կազմուեցաւ՝ բաղկանալով շատ յարմոզակ կերպիւ՝ հեռևեալ անձերից։ Ն. Ամատունի՝ փաստաբան և գործել ցանկացող մի անձն։ Պ. Ա. Ցովհաննէսեանց՝ խմբագիր-հրատարակիչ Փոչ տմատպրի։ Պ. Գ. Սիմեոնեանց՝ մեր քոչ և ծանօթ հեղինակը, որի մատները ճերմակացել են թատրոնական գործերի մէջ։ Պ. Ա. Մանթաշեանց՝ անուանի վաճառականն և Պ. Ի. փիլոյեանց՝ ճշմարիտ թատրոնասէր և բանիմաց մի մարդ։ Մատնաժոդովի այսպիսի նպատակայարմար կազմուածքն արդէն մի սանակ երաշխաւոր էր ձեռնարկութեան յաջողակ ընթացքին, և իրաւ առաջին նիստին իսկ կարծեօք ընդունելին երկու նշանաւոր վճիռներ, ա) Ներկայացումներ տալ ոչ թէ Աբծրունու թատրոնում, ինչպէս առաջ մտադրուեցին կոր, այլ քաղաքայնում։ Այս վճիռն ընդունելու չարժառիթն այն էր, որ Պ. Աբծրունու նորակառոյց չինուածքում երեկոյեան ծախքը հասնելու էր 100–120 ռուբլու, այն դէպքում անպատ, եթէ պարտքը ոչ մի վարձ չը պահանջէր, ինչպէս և ինքն մեծահոգութեամբ առաջարկում էր, մի և նոյն ժամանակ թատրոնը չունէր ոչ հանդերձեղէնք, ոչ զարդեր, ոչ էլ բեմական իրեղէններ, նոյնպէս բեմի նեղուացքն թեան և մեքենաների բացակայութեան պատճառաւ բաց ի սեղական թատերախաղերից, զաւեշաններից և մի քանի կատակախաղերից (comédie) ոչ մի մեծագիր բան ներկայացնել չէր լինի։ Ներկայիս ամենամեծ եկամուտն ևս հազիւ էր հասնում 400 ռուբլու։ Այն մեծ քաղաքային թատրոնը կարելի էր վարձելու 175 ռուբլով, իսկ քանդիթը ներկայացման համար, արձակ ու ընդարձակ բեմով, հարուստ զարդերով, ճոխ հանդերձարանով (garderode) երաժշտախմբով, ամառնային պարտէզով և 700 ռուբլ ամենամեծ մուտ-

քով։* բ) Որը մեր կարծիքով ամենանշանաւորն էր, չը-
բաւականանալ տեղական գերատանական խմբով, այլ
հրաւիրել և Փօլիոյ գերատաններ և գերատանուհիներ։
Մասնաժողովը լռութիւն հաստատեալ թէ՝ անիրաւացի է
պահանջել հասարակութենից, որ նա ազգասիրական
դգացումով լցուած, մայրենի լեզուի սիրով յափշտա-
կուած, ազգային թատրոնի գոյութիւնով ոգևորուած՝
վճարէ փող առանց ստանալու իրեան և, իր հատուցածին
իբրև տոկոս ու շնորհ, պարտատրած լինի մի ամբողջ ե-
րեկոյ դիտելով (յօժարելով) և ձայնակցելով։ Արդար և ճշմա-
րիտ է ասած թէ՝ երբ մարդս մի բանի համ մէջ որ և է
ազգային գործի հետ վճարում է մի յայտնի գումար,
նա իր բարեկամներուն մեխիթարութիւնը գտնում է նոյն գոր-
ծին նպատակի մէջ։ Բայց ինչպէս հարկադրել մարդուն և
ինչ իրաւունք, որ նա և՛ վճարէ և՛ տաղտկանայ։ Մանաւ-
անդ որ թատրոնը չսահմանում ենք գեղարուեստական և գրա-
կանութեան նպատակով։ Հատուցուցիչս կարելի է ասել որ
այս անհատ քննադատը խաղերին ներկայ գտնուողն նպատակ
կը լինի չդատապարտելու, այլեւ բոլոր դերգիրկ գազափարնե-
րը, նոյնպէս և իւր վճարած փողն։ Եւ ապա ուրեմն ինքն
քան ինքնին հասկանալի է, որ պատշաճաւոր ներկայա-
ցութիւններ տալու համար հարկաւոր են պատշաճաւոր դեր-
աստնիր, ինչպէս և մեծ ախորժ լրագիր հրատարակելու հա-
մար հարկաւոր են մեծ ախորժ աշխատակիցներ։ Այժմ, սի-
րելի ընթերցող, մի քանի հոգեցաւ ձգենք տեղական
դերասանների վերայ, առանձնք թէ արդեօք ներկայա-
գնում ելիս նոքա բաւականացուցիչ այժ օրինաւոր ներ-
կայացութիւնք տալու համար։ Ցեղական խումբը բաղկա-
ցած էր,

Գ. Գ. Ջիվանեան, որոյ անունն անկասկած ոսկի տառերով
կը գրուի Ռուսահայաստանի հայ թատրոնի պատմու-

* Անհարկերոյ կան իր լինելու, երբ Մասնաժողովն բա-
րոյի կառավարչի հետ պայման կապելուս՝ իրան վրայ պահէր
իրաւունք երբեմն երբեմն՝ մանաւանդ կիրակի օրերը՝ Պ. Արծ-
րունեան բատրոնում խաղալուս։

թիւնը։ Դժուար թէ երբեւ մեր մէջ գտնուի մարդ, որ այնչափ աշխատած լինի եւ մի եւ նոյն ժամանակ այնքան գրականքներին ներթափանցած լինի թատրոնի համար որքան Գ. Զահկեանը։ Բայց երբեմն դերասան ունի մի քանի թերութիւններ որոնցից՝ ըստ իս, աններելին՝ գլխաւորապէս դեր չսերտելու սովորութիւնն է։ Օրինակի համար պատմում են ոմանք թէ համբաւաւոր Խաստագի կարատիգինը, Սադովսկին, Սամոյլովը սովորութիւն չեն ունեցել իրենց դերերը բերանացի անելու, այլ ընդհակառակն ուշադրութիւն մի կերպիւ դուրս էին պրծնում նեղ դրութիւնից։ Եթադրենք անգամ թէ այդ պարոնայք, որոնք հանճարներ էին համարվում, ունեցել են կամ ունին այդ արատը (այսքանը դնենք խոստովանենք) նոյնը դեռ ևս իրաւունք չի տալի մեզ՝ հասարակ մահկանացուներիս հետևելու նոցա օրինակին, այն ևս պակասութիւններ են ինչ որ հանճարների համար յիշողութեան նեցուկ և պատճառ է լինում, նոյնը երբեմն հասարակ տաղանդաւորների համար դառնում է նախատինքի հիմք ու միջոց։ Ուզիղն ասած դժուար է հաւատ ընծայել, որ յիշեալ անձինք ունեցած լինին այդպիսի մի հակադերասանական յատկութիւն։ Ինչպես կարող է դերասանը տպաւորութիւն գործել հանդիսականների վերայ իւր լաւ խաղով՝ ոլն է արտադրեալ դերասանի դիրքի, շարժուածքի, ձայնի, ելևէջների (intonation) հայեցուածքի և երեսի բացատրութեան, այո, ինչպես կարող է, ասում եմ ես, այդ ամենը յարմարեցնել այս ինչ կամ այն ինչ պայմաններին, եթէ նա չէ իմանում թէ ինչ պիտի ասէ կամ ինչ պիտի անէ։ Գաղղիայում դերասանները, որքան էլ ոլ նա քանքարաւոր լինին, որքան պատրաստ են համարում իրանց դերերը օրինաւոր սերտել և բարեխղճու թեամբ ուսուցանել։ Սառա Բեռնարը, Գոտը, Կօկլինը, որոնք վերոյհնուանեալներից ատոր չեն քանքարով, երբէք չեն համարձակիլը բեմ դուրս գալու առանց մի քանի տասնեակ փորձերի։ Եւ չընայելով այդ ձանձրացուցիչ փորձերին և տարաւախելի աշխատանքներին, որոնք գործ են դնվում մի

պէսոյն վերայ առաջին անգամ երևալու համար, նոքա ըմբռնում են և սէր դառնում իրանց դերերի, միայն մի քանի անգամ ներկայացնելուց յետ բեմի վերայ, ուր նոքա արդէն վերջնականապէս ընդունում են այս կամ այն չարժմունքը, այս կամ այն դէմք (ton), ուրանալով թէ այն է առաւելապէս ազդում բազմութեան վերայ։ Տիկին Սառա Բեռնարը իւր վերջին «Ֆեդորա» դերի կատարման մասին գրած նամակում ասում է թէ սերտելիս իւր դէմքը նա ստիպուած է լինում մի ևնոյն մասը կամ սլարբերու-թիւնը կրկնել տասնեակ, հարիւրեակ անգամ, որպէս զի դանէ բուն դէմքը և գտագործի։ Անհամ դերասանուհի Ռաշէլից ճեպացած տեսարների ականատեսները վկայ ամեն նորա աննախանձելի դրութեանը՝ մտատան, ըղձանգն և ղրիչն ամենը գործի մէջ են եղել։ Այս ամեն եղելութիւնները նկատողութեան առնելով, մենք երկրայում ենք, որ մեր գործիչներն երբ և իցէ ժամանակ ունենան և կարողանան նոցա պէս իրանց դերերին իւրացնել ու տարրացընելու։ Այդ բազդն արդէն վիճակուած է աթոռանիստ քաղաքներին, ինչպէս Փարիզ, ուր իւրաքանչիւր պէսը ներկայացնում են հարիւր անգամ, իսկ երբեմն հազարից անցնում է թիւը։ Կրկնում ենք ցաւելով թէ դերասերտութիւնը հասկացող դերասանների աչքում մեծ նշանակութիւն է ունեցել և մեծ խորհուրդ։ Համաձայնուելով որ անհրաժեշտ է մի որևէ դեր հիմնովին ուսումնասիրել առանց անգիր անելու նորան։ Գալով Գ. Գ. Զիլհանեանին, պէտք է սյնու ամենայնիւ ասել որ նա տեղական խմբի մէջ միշտ պատուաւոր տեղ է ունեցել և շատ դերեր կատարելապէս յոյժողուել են նորան։

Գ. Ա–ենց դերն բաւականին յաջողւում էր տեղական վաճառականների, պաշտօնեաների և մի քանի ևղեռնաւորի դերերը, ինչպէս գոր օրինակ՝ աւազակ Շոպարի դերը «Լեռնի տարհանգակ» թատերախաղի մէջ, որը ինքն ըստ ինքեան շատ երախտաւոր դեր է։ Բայց այլ դերերի համար նա անյարմար է թէ իւր չարժուածքով, թէ իւր կոկորդով և մանաւանդ բեմնյարդարը (ré-

gisseur) չըլլնելուն պատճառաւ կատարում է իւր կատա-
բելիքն ըստ հաճոյից կամայապէս, որը պէտք է խոստո-
վանիլ, ընդհանուր է մեր ամբողջ դերատանական խմբին:
Որքան մեզ յայտնի է, երբ մի այլ ոք և է բեմի վերայ
կրկնութիւններ են լինում մի երկասիրութեան, հեղի-
նակին կամ թարգմանչին, բեմայարգարն նաև երբեմն ե-
ղանակները (քնիչ) ներկայ են գտնվում և հարկաւոր ե-
ղած ակատոզու թիւններ են անում: Հեղինակն կամ թարգ-
մանչն կարող է նկատել թէ ինչպէս է ինքն հասկացել
այս ինչ անձնաւորութիւնը և թէ ինչպէս է նա իրան պատ-
կերացրել այս կամ այն տեսարանը. իսկ բեմայարգարը,
որի հաւանութեանը ենթարկուած է բեմական աչխարհ
և որը մի փորձուած և դործուած անձ պիտի լինի, ու-
զում է նկատած սխալները, անօրինում է տեսարանն-
երը, որոշում է ամենի տեղերը, ցոյց է տալիս ներկայա-
ցընողին թէ ինչպէս է կատարել այս ինչ դերը այս ինչ
ականաւոր դերատանը, և այլն, և այլն: Ծիրան՝ ահագին
նշանակութիւն է ունենում երբեմն մի հասարակ չար-
ժուածն, ծիծաղն կամ ժպիտն: Պ. Լիզուվէն հաղորդում
է այս մասին թէ մի պէս փորձելիս, թէև շատ էին չար-
չարվում թէ ինքն թէ բեմայարգարը և թէ դործող ան-
ձինք գոհ չէին մի դերատանից, նա դիմում է Պ. Սկրի-
բին, որը մատամբ աչխատակցել էր շարադրութեանը, և
խնդրում է նորանից օդնութիւն. սա անմիջապէս գալով
կրկնութեանը, մի չորժուածք, մի ժպիտ աւելացնելով
և խումբն այլ կերպ դասաւորելով, այնքան գեղեցկա-
ցուց և կենդանացուց պատկերն, որ այդ տեսարանը իսկ
եղաւ այդ պիեսի յաջողութեան գլխաւոր պատճառն: Մեր
խեղճուկ խմբակը, որը բռնադատուած է ամեն անգամ
նորանոր պիեսներ ներկայացնել, շատ շատ հինգ կամ վեց
անգամ միայն փորձելով, չունի մինչև անգամ մի փորձ-
ուած ոք մին, որ ուղղէր նորա սխալները, պարզէր խրթին
տեղերը, ցոյց տար թէ որ կողմից պիտի գալ և որ տեղ
կանգնիլ, կամ յիշեր թէ նախկին հմուտ պաշտօնակից-
ներն ինչպէս են կատարել, կամ թէ ինչպէս ասում են,

աւանդները թատրոնական աւանդութիւններին։ Ի հարկէ որ այս վիճակի մէջ չատ էր պահանջել չլինի խմբից։

Պ. Տէր-Դաւթեան՝ որի բնածին կատակերգական ձիրքը անհերքելի է, բայց ապաբախտաբար անկարող է լինում հասկանալու և ուսումնասիրելու իւր դերը։ Աչառն որ ուսումնասիրել բառը նորա ականջին խորթ է հնչում այլապէս եթէ օրինաւոր ուսումնասիրէր, կարելի է նորանից քաջ կատակերգու դուրնալ։ Ես լսել եմ թէ պարոնը մտադիր է եղել դնալ Մոսկուա, որպէս զի տեսնէ այն տեղի դերասաններին խաղալիս և ընդօրինակէ նորանից, բայց ցաւերով պատում որ նորան չէ յաջողել իւր դիտաւորութիւնն իրագործելու։ Աչառի պատում եմ, որովհետև դժուար է իրաւ մի լաւի բան յատկանոյ առանց բարի օրինակի, մանաւանդ եթէ մէջ տեղը չկայ նաև բարեկրթութիւն և զարդացումն, որը վոխարինէր նորան։ Պ. Տէր-Դաւթեան այսու ամենայնիւ մինչ յաջողում է ծիւզակցնել հանդիսականներին, թէև տեղերդ չլինի ասել այս տեղ, որ հաստատակամութիւնը յաճախ ընտեանում է մէն որ և է կատակերգուի և բոլոր նորա արտայանքն ու վարմունքն ծիծաղ են յարուցանում այն դէպքում անդամ, ուր բնաւ ծիծաղելու տեղի չկայ։ Պատմեմ ինչ պատահեցաւ իրեւ օրինակ կարող է ծառայել նոյն իսկ Պ. Տէր-Դաւթեանը։ Մորան տուել էին միանդամ դահճի դեր կատարելու և չընայելով որ նորա չարժուածքն ու խօսքերի մէջ չկայ միանդամայն ոչ մինչ ծիծաղաշարժ բան, բայց ժողովուրդն այնու ամենայնիւ խնդում էր։ Նոյնը պատահում է և մեր դերասի երգարոյ վրացւոց բեմի վրայ։ Մտաբերում եմ, որ իշխան Երիստովի փոխադրած Սարդուի «Հայրենիք» պիեսում Պ. Մեսխին՝ դիակուաս Գոլիսի դերակատարն առաջին արտաստանած խօսքերով իսկ ծիծաղ և շշուկ յարուցեց դրեթէ ամբողջ թատրոնի, այն ևս մի չատ որտաշարժ տեղում։ Մինչ ես իմ բարեկամներս, որոնք ինձ նման պատահական այցելուք էին վրաց թատրոնի, չատ էինք զարմանում այդ տարօրինակ երևոյթի վերայ, թէև չարժատեղին Գորտեան հանդոյց չէր և

հարկէ։ Պ. Մնախին լինելով չնորհալի կատակերգու և սիրական վրաց ազգաբնակութեամբը՝ խօսածին պէս թատերասէրներն սկսան ծիծաղիլ։ Այս հանդամանքը անտես չեն անում նաև փարիզի թատրոնների կառավարիչները։ Երբ նոքա մի նոր կատակերդ են հրատիրում նոքա դիմում և խնդրում են ոեջիսէրներից որ սոքա իւրեանց քննութիւնների մէջ գովեն և ծիծաղաշարժ գտնեն նոր դերասանին, որպէս զի հասարակութիւնն որքան կարելի է շատ ընտելանայ դերասանին։ Այս խօսքերովս չեմ ուզում հաստատել թէ՝ կատակերգուն կողմնակի միջոցներով չատացած կանգնում է և ճնում չինական կէտի վերայ, քանի լիցի, նա օր ըստ օրէ կատարելագործում է իրան և յառաջանում։ Ուրեմն վերադառնալով պ. Տէր-Դաւթեանի, այսքանս կ'ասենք որ նա թէպէտև սիրելի է ամենեցուն կը զգուեցնէ շուտով իրեն ծափահարողներին, եթէ չարունակէ ծաւալելու բեմին իւր միակողմանութեամբ և անփոյթութեամբ։

Պ. Մանդինեան, որին իւր համարուեստ ընկերների մէջ կարելի է ընդունիլ իբրև միակ բեմասէր՝ սա անհրաժեշտ է համարում իրան ստանձնած դերը միշտ խղճի մուօք պատրաստելու։ Ձշմարիտ որ սորա խաղի մէջ նկատվում է որ այս մարդը մնացել է խորհել է իւր կատարելիքի մասին և որ միւսների պէս ոչ է ապաւինիլ յուշարարին և բախտին։ Փառք և պատիւ պարոնին։ Դերասանուհիներից հարկաւոր է երբէք չըմոռանալ տիկին Սաննին Զոլիմանցին որին Թիֆլիսի հայ քնքուշ սեռից իբրև առաջին վիճակ էր ընկել պատասխանել նախապատարմանքի քօղն և համարձակ ոտը կոխել նորաբաց բեմի վերայ։ Սա մի զգօն և ծանրագլուխ դերասանուհի է, բայց մեկը խումբ չէ կազմում, ինչպէս մեկ ծաղիկ գարուն չէ ընծայում։ Իսկ Շուշան Մելիքեան, օրիորդ Վարդուհի, նմանապէս Տիկին Սուխեան, Սաֆրազեան,* Ալբեան, Զաբինեան, Աբրահամեան, Սա-

*Լսում ենք որ Պ. Սաֆրազեանը ղրջում է քաղաքէ քաղաք, ճանապարհ է երիտասարդներ եւ ներկայացումներ է տալի։ Ի բոլոր սրտէ ցանկանում եմ նորան յաջողութիւն։

ջոֆան և Մահակեան թող ներեն ինձ վհհանձնութեամբ որ ես չեմ կարողանում նոցա դերացուցակում մի յիշատակելի արժանի դէպք. թէպետև պէտք է ասել որ Պ. Պ. Սաքիսեանին և Սաֆրազեանին մի քանի դերերը բաւականին յաջողվում են և Պ. Ալպարեանը երեք տարուայ ընթացքում բաւականին յառաջացաւ և մի օր պատուաւոր տեղ կարող է բռնել եթէ նա չընդհատէ սկսածն։ Այսպէս ծանօթանալով տեղական խմբի մշտական անդամների հետ, յարդելի ընթերցողը կարող էր եզրակացնել որ նմանօրինակ աննշան գործողներով, եթէ ոչ անկարելի դոնէ անչափ դժուարին էր մի որ և է փոքր չափ նշանաւոր պիես բեմ հանել։ Ուստի Մանանաժողովը վճռեց ապսպարել դերասաններ և դերասանուհիներ Բոսֆորի ափերից։ Սոցա հրաւիրելու նշանակուեցաւ Պ. Գ. Զմշկեանը, որ անմիջապէս եկաւ տեսաւ և բերաւ իւր հետը Ա. Դամեանին, օր. օր. Աստղիկին և Սիրանուշին։ Այս հրաւէրով, մեր կարծեօք, մի ճշմարիտ ծառայութիւն մատուց Պ. Զմշկեանը, որովհետև նորա ընտրութիւնը համապատասխան էր ներկայ հասարակութեան նրբացած ճաշակին։ Զարմանք է իրաւ, Հայկական թատրոնի այս ազնիւ, արի և աղատ մարտիրոսն մի քանի ամիս առաջ մի նամակ ուղղելով «Արձագանք» չարաթաթերթին, ճգնում է նորա մէջ անօրինակ ներողամտութեամբ իւր վերայ առնել խումբի լուծման մեղը։ Ընդ հակառակն Պ. Զմշկեան մեր կարծիքով այս ձեր մատուցած ծառայութիւնը ձեր Հայ թատրոնին մատուցած ծառայութիւններից ամենանշանաւորներից մին է։ Պօլսից եկած հիւրերը առաջին ներկայացումից իսկ առաջին տեղ բռնեցին տեղական խմբում և պէտք է խոստովանիլ որ Թիֆլիսը առաջին անգամ էր տեսնում այսպիսի մի խումբ։

(Շարունակելի) Ս. Փ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Երբ Շահնուր մեր նախորդ ամսագրին մէջ կ՚ամփոփէր թէ քարեյիշատակ Հ. Խիւէքճեանի յօդուածին՝ «Ոչ է կաթողիկոսութեան յարմարագոյն անձ» խորագրով, վաւերական էր ամէն ժխտելի փաստերու ուժով, կատարեալ ճշմարտութիւնը կ՚պաշտպանէր Գ. Սրուանձտեանին, հապա իր նոր անուամբը կոչենք, Գ. Թէքեաեանին պէտ որ պարզապէս կը զրպարտէր մինչև անդամ իր գերեզմանին մէջ՝ Խիւէքճեանը, ինչպէս որ խմբագրութեանս հետզհետէ ստացած նամակներն, այլև այլ արժանահաւատ անձերու կոչմէ, այդ զրպարտութիւնը կ՚հերքեն և ստախօսութիւնն կ՚չանթահարեն։

Այս նամակներէն երկուքն արժան կ՚համարինք հրատարակել, որպէս զի ընթերցողն ըմբռնվին համոզուի, եթէ երբէք կասկած մը կ՚ստածէ, թէ ինչ աստիճան մոլորեցուցած է Գ. Թէքեաեան, որ արևու պէս պայծառ իրողութիւնն ի՛ւրանալու չափ յանդգնելէ զատ՝ իրեն տարակարծիք եղողները նախատած և անուներեվ հայհոյութիւններ անունց դէմ ժայթքած էր։

Ահա առիթ այդ նամակներուն.

.... թմբադիր անօրէն

Աբեղեան Մ.ի պատուական հանդիսին,

Զգիտեմ որպիսի համոզմամբ կը վարձեն ոմանք, մանաւանդ ցուվհաննէս էֆէնտի Աբշակունի, կասկած յարուցանել ի մասին վաւերականութեան Հ. Իփէքճեանի նշանաւոր յօդուածոյն որով կաթողիկոսական ընտրելի կը նշանակէր զՏ. Մելքիսեդեկ Ս. Աբգեպիսկոպոս Մուրատեանց, զԱռաջնորդն Զմիւռնիոյ։

Այս յօդուածն որ հրատարակեցաւ Հայրենիքի մէջ՝ նոյն ինքն Հ. Իփէքճեանի հեղինակութեամբն է յօրինուած և ԻՒր իսկ ստորագրութեամբն է վաւերացեալ. վկայ են Մ. Մեզպուրեան, Ս. Փափազեան, Պ. Թորգոմեան, Ա. Սուրէնեան էֆէնտիք և ես ինքս, որ աչօք բացօք տեսաք զայդ յօդուածոյ ձեռագիրն, կապարեայ գրչաւ գրուած, երբ գնացած էինք յայցելութիւն մահամերձ Իփէքճեանի յիւր բնակարանն ի Բանկալթի։

Ես անձամբ ընթերցայ զայն ի լուր ներկայից, մինչ ազգացեալն Իփէքճեան՝ մահուան անկողնոյն մէջ ընկողմանած՝ երբեմն կ'ուղղէր սխալ ընթերցուածներս, և մերթ կարի դժուարութեամբ կը յաւելոյր ինչ ինչ բացատրութիւններ՝ իւր գրութեան այս կամ այն մասին թիւրիմացութեան տեղի չթողլոյ համար։

Այս է ահա իրողութիւնն. այսպէս ահա վաւերական էր այդ գրուածն ամեն մասամբ։

Ց. ԳՈՒՐԳԻՆ

18 փետրուար 1884
Յօրթաղիւղ, Կ. Պոլիս։

.... Խմբագիրը,

Նոր մէկն եմ. գուցէ իբր այս ձեր ընթերցողներէն ոմանց դժգոհութիւն և այլոց թերևս գոհութիւն պատճառեն իմ գրելիքներս. հոգ չեմ ըներ թէ որո՛ւ պիտի վերաբերին իմ խօսքերս, ոչ իսկ թէ յարգի պիտի անցնի՞ն անոնք. «ի՛նչ փոյթ աղբեր թէ ուր պիտի հոսին իւր ջրերն»: Մարդ որ ուղղութիւն և անկեղծութիւն ունենայ առաջնորդ իւր գրուածոց կամ խօսուածոց՝ բաւական արիւթիւն ալ կ'ունենայ՝ կարծեմ՝ իւր համոզումներն արձակ համարձակ յայտարարելու:

Ձեր հանդէսը կը կարդամ ես առաջուց ի վեր. դիտած եմ թէ դուք չէք և չէք եղած երբէք այն խմբագիրներէն որ հանդերձ փոխելու պէս սկզբունք կը փոխեն, օձեր՝ որ եղանակաց համեմատ շապիկ կը փոխեն. դուք չէք եղած այն կարգի գրողներէն որ անպատուաբիւն են մեր խմբագրութեան և անով մեր ազգին, որ արատ են Հայ գրականութեան և անով Հայ ազգի ընդհանրութեան: Կուրութիւն, մուրացկանութիւն, սուրկուբիւն՝ մեր գրողաց ախտն եղած է ժառանգական: Անբարոյականութիւնն այնչափ ծաւալած է մեր մէջ՝ որ ազգին ամենէն բարձր ժողովներն ալ զերծ չեն անկէ. կ. Պոլսոյ Երեսփոխանութիւնն իւր մէջ կը բովանդակէ այժմ սուտակասպաս, չոլմարար, անձնասէր և ազէտ մարդոց ստուար խումբ մը, որուն առջև նշանակութիւն բնաւ չունի դժբախտ Հայ ազգի օգուտն. եթէ այսօր քիչ շատ ազգասիրութեան և իմաստուն գործունէութեան ոգի մը կը նշմարէք Երեսփոխանութեան վրայ, մի կարծէք թէ մեծամասնութիւն ունին այն երեսփոխանք որ ազգին օգուտը նախամեծար կը համարին իրենց անձնական նկատումներէն և եռանդ ցոյց կու տան ազգային գործոց բարւոք վարչութեան մասին. այսպէս կարծելը ճշմարտութեան դէմ մեղանչել է: Չէ, բարեկամ. հազիւ չափազանցութիւն ըրած կ'ըլլամ, եթէ մատի վրայ հարիլ փորձեմ այն երեսփոխանները որ լաւ կը ճանաչեն իրենց պարտականութիւնն, իբրև ներկայացուցիչ Հայ ժողովրդեան, և կը փայլեցընեն ուղղութիւն և անկեղծութիւն իրենց ընթացքին մէջ: Երեսփոխան ըլլալ շատ դիւրին բան է մեր մէջ. քանի մը հարիւր ընտրող գտնուած թաղերու մէջ քանի՞ երեսփոխան արդեօք հարիւր քուէ ստացած են իրենց ընտրութեան համար. դեռ անցեալներս մայրաքաղաքիս լուսաւո-

բնակ կոչուած մէկ թաղն, որ ունի իբր 150 բնակիչ, պատճէն քուէից բացարձակ մեծամասնութեամբ կու տար իւր երեսփոխանն, որ այժմ Ազգային ժողովի մէջ կը փայլի բացարձակ լռութեամբ ... պիտի ըսէի խոհեմութեամբ: Երբ ժողովուրդն այսպէս անտարբեր է իւ գործ դնելու իւր սահմանադրական մի անկասելի իրաւունքն, երբ չունի նախանձայուզութիւն իւր ընտրական պարտականութեանց և իրաւանց մէջ, ինչպէս կարելի է յուսալ, որ ի մօտոյ բարեաղէի երեսփոխանութիւնն:

Զուր ի հիմնուած կարդալով թաղից մէջ երեսփոխանական դատարկանց նկարագրութիւնն՝ խոովարար մտս մը կը նկատէ անշուշտ մեր Ազգային ժողովին մէջ, խոովարար, այո, որ կարծես դուռ և դատարկ չտար երբէք ոչ ներսէս սրբազանի, այն փաղփական հիւանդին, որ հանգիստ ննջէ Զրգասլընի հինօրեայ հիւանդանոցն: Թող թոյլ իւղի բարձանց վրայ յուսալից ... ոչ. Ազգին ինչ վարչութեան Քաղաքական ժողովոյ, որ կարենայ մարսել և մարսեցընել տալ այս կամ այն երեսփոխանին դժուարահաղ հարցասիրութիւն. ոչ սովելոց Յանձնաժողովին, որ իւր հաստատութիւնը Ներսէս սրբազանի բերնով մերժէ Ազգային ժողովոյ մէջ. ոչ Բերայի հրկիզելոց Յանձնախմբին, որ վերջին դատաստանին պահէ իւր համարը տալ և անվճար ընկալագրոց հաշիւը մաքրել, և այլն, և այլն, և այլն: Բայց եթէ հինաւուրցն Մահիպ կամ Նորաձագն Աբեւիկք, պոյն և դրօշ ի բաց թողլով, չվիջանէին խնդրագիրել Ազգային ժողովոյ դատարանից արձակ նպատակ իւնեներն և անկոլմնիպալ ոգւով բարեհաճիլն իրենց գերները պատուաւոր պահել Հայ լրագրութեան մէջ, այն ատեն դուք ալեսի համոզուէիք թէ այն խոովարար տեսնուած երեսփոխանք, զրպս լռեցընելու համար պատմութեան մէջ անօրինակ յանդիմանութիւններ և նախատինքներ ալ լսուեցան յատենի ժողովոյ, այն անդադար երեսփոխանք են որ խղճմտիա ոգւով կը կատարեն իրենց պարտականութիւնն և կը ջանան տալ Երեսփոխանութեան այն նշանակութիւնն՝ զոր կ'ուզեն զլանալ անկէ ուրիշ կարդ մը անձինք, որ կը կոչուին ունևոր երեսփոխանք՝ թէև թիկունք ունենալով իրենց չի իսկ զմփ:

Բայց մալ են ատոնք — այս մարդիկ մեծ մեռամբ անոնք են որ ջ-ց ամիս ատաջ չէին կրնար երեսփոխան ընտրել պատճառն ընել ազգին, հանգամակ բազում թղթակցութեամբ ներսէս սրբազանի. ասոնք այժմ սկսած են տակաւ դալ բազմիլ այն աթոռներն զոր կ'անարգէին երբեմն. ինչ փոյթ իւրեանց և որչա՞ք

կարմ մէջտեղ մէջ։ Այլ այս բանը գաղտնիք մը չէ, ոչ ալ հանե-
լուկ. ըստ որում կը յիշեմ նայ Կաթողիկոսի ընտրութեան օրն,
ի հարկէ այդ ունևւոր երեսփոխանք ունին դեր մը կատարելու.
եթէ 1866ի ընտրութեան եղանակն իբաց թողուէր ըստ առաջ-
արկութեան երբեմն ի՛նչ ցանձնաժողովին, այն ատեն ի՛նչ
պարծ ունէին այդ մարդիկ երեսփոխանութեան մէջ. ուրիշ տե-
ղեր կրնային ապահովապես կատարել իրենց պերն։ Բայց այժմ,
որովհետև կ. Պոլոյ Երեսփոխանութիւնն պիտի ընտրէ Կաթո-
ղիկոսն, հարկ է որ իրենց ներկայութեամբ պատուեն Ազգային
ժողովն։ Մի՞թ դրէք ըսածիս. եթէ Աստուծոյ ողորմութեամբն
իրենց ընտրելին չյաջողի վճռամասնութեան քուէն ստանալ ի
Կաթողիկոսութիւն, այն ատեն այդ երեսփոխանք մի առ մի
չորրորդ բացակայութեամբ պիտի թողուն իրենց աթոռներն՝
լաւագոյն պատեհութեանց սպասելու համար կամ, նոր Պատրի-
արքի ընտրութեան ատեն, վերստին երեսփոխան ընտրուելու
վրէպ յուսով։

Հետաքրքիր բան է գիտնալ թէ այժմ ո՞վ է իրենց կաթո-
ղիկոսական ընտրելին — Ներսէս պատրիարքն պիտի ըսէի ես,
եթէ Նորին Բարձր Սրբազնութիւնն ի ձայն փողոց չհոչակէր Ա-
րսպատ ուխտարհիթէ չպիտի ընդունի, եթէ երբէք ընտրուի իսկ,
Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան գերագոյն պաշտօնն (հա-
կառակ այն փութկոտ խմբին նախապատրաստական յայտա-
դրին՝ որով նպատակ ունէր ընթրեալ ժողովը համաձայնութիւն մը
գոյացընել կաթողիկոսական ընտրելւոյ մասին . . . արդէն հա-
մաձայնեալ տպերաց մէջ միայն անշուշտ, կամ որսորդ մարդ-
կան ըլլալու նախահոդ աշխատութեանց պարապիլ) հիւանդոտ
և անյարմար ըլլալով այդ պաշտօնին. բայց որովհետև ժամանա-
կէ մ՚ի վեր մեր մէջ երևոյթներն իրողութենէն տարբեր ցոյց
տալու խորին քաղաքադիտութիւնն մուտ գտած է յօգուտ Ազ-
գին, թերևս Ներսէս սրբազան իրօք հիւանդ չըլլայ, կ՚ըսեն ո-
մանք. թերևս Ազգային ժողովոյ ակնկալեան դասուն ընտրե-
լին, ըստ կանխորոշ համաձայնութեան, ըլլայ իրօք Ներսէս սրբա-
զանն, կ՚ըսեն այլք։ Իսկ ես որ թերահաւատ եմ, դիւրաւ չեմ
հաւատար այդ կարծեաց, ոչ ալ կանխորոշ համաձայնութեան
մը, քանզի Նորին Սրբազնութեան յայտարարութիւնն թէ չպի-
տի ընդունի կաթողիկոսութիւնն՝ հրապարակի վրայ կը մնայ,
քանի որ տպերքը իրողութիւնք վերապահեալ են սակաւուց. մի-
այն թէ, որովհետև պատրիարքական խնդիր ալ ունինք այժմ,

ես թերահաւատս, չատ մը խորհրդածութիւններէ յետոյ, սա եզրակացութեան կը յանգիմ թէ, կաթողիկոսական և պատրիարքական խնդիրք չատ մերձաւոր յարաբերութիւն ունին իրարու հետ, ելեքտրական թելով մը կարծես միացած են երկուքն, և մէկուն ցնցումն միւսին ալ կ'ազդէ հաւասար կերպիւ, այնպէս որ այդ կրկին խնդիրներն է մօտ միանգամայն լուծուած տեսնելու նախազգում մ'ունիմ յիս՝ չգիտեմ երբէն ի վեր։ Կամք Տեառն օրհնեալ եղիցի։

Բայց երեսփոխանաց այդ կարգին մէջ օրուան դիւցազն է Պ. Յովհաննէս Արշակունի, դիւցազն երկայնամօրուս և երկայնալեզու, որ փոքր լեռներն ինքն է ստեղծած, Ազատ Որմնադրաց այդ ճշմարտախօսութիւն և ծանկեդ բարեկամն, որ ունի հայհոյելու չափ ճարտարախօսութիւն և թքնելու չափ քաղաքավարութիւն. վայ ձեզ, Մամուրեան, եթէ Կ. Պոլիս գտնուած ըլլայիք, ձեռնոցները չատոնց ընդունած էիք ձեր երեսին. չէ՛ք լսեր օրչափ կը խօսեցընէ իւր վերայ այս օրերս. իւր գրիչը պղտվատէ է, որ սխալմամբ գրիչ ճուլուած էր փոխանակ սրոյ. բիրն աւելի վայելուչ է սակայն իւր ձեռքին քան գրչի բունն, մանաւանդ այժմ որ թիկնապահի պաշտօն ալ կը վարէ ի պաշտպանութիւն անձին . . . անպաշտպանելոյն։ Ձշմարտութեան այս նորանշան հերոսն՝ ապացուցանելու համար թէ 2+2 ալ 6 կ'ընէ՝ իւր բոլոր գինուորն սպառազինէն՝ կ'իջնէ այս անգամ յաստպարէզ և ամենագճուճ լեզու մ'արձակելով աջ ու ձախ՝ կը ջանայ հաստատել թէ Համբարձում Խիչքճեանի յօդուածն (որ բնական էր թէ չատին հետ իրեն ալ ջիղերուն դպչէր) իրը չէր, թէ իւր ստորագրութիւնը կորզուած էր այդ յօդուածին համար, թէ ինքն (Պ. Արշակունի) չենթադնի վկաներ ունի հաստատելու յօդուածին անհարազատութիւնն և ստորագրութեան անվաւերութիւնն, և թէ այդ նենգութիւնը գործող անձն գիտէ։

Երբ անպատկառ ստախօսութիւնն այն աստիճան կը բարձրանայ որ մարդ՝ վարանած՝ չգիտեր թէ ինչ ընէ, ինչ պատասխանէ, Պ. Արշակունիի նման վոքրոգի մարդիկ յաղթութեան թմբուկն հարկանելով՝ իրենց անամօթ չհատակութեանց վրայ պմպլած՝ տեղէ տեղ, տունէ տուն կը պտըտին պարծելու թէ ճշմարտութիւն մ'երևան հանած են, դաւ մ'ալ խայտառակած են, ծառայութիւն մ'ալ մատուցած են իրենց ազգին, ինչպէս Պ. Արշակունի՝ քայլերն ամուր կոխելով՝ աստ անդ կը յոխորտայ այժմ թէ նոր դաւադրութիւն մը հանած է դերեզմանէն, նոր

ծառայութիւն մ՚ալ ըրած է Ամեն. Ներսէս Սրբազանի. ծիծաղելի՛ ծառայութիւն, որոյ արժէքն իրեն պէս քանի մը մարդիկ միայն կրնան դնահատել։

Բայց մէկ հարուածով ատպալելու համար ատենօսութեան դիւրափչուր ամբարտակ մը, բացորոշ կերպիւ ակն կ՚ըսեմ իրեն թէ հանգուցեալ Խիէքճեանի ձեռագիրը կեցած է Հայբենիքի խմբագիր Մ. Մէլիքեան էֆէնտիի քով, կապար գրիչով գրուած, զոր իմ աչօքս տեսած եմ. ինքն ալ կրնայ երթալ տեսնել զայն։ Եթէ Պ. Արշակունի Ֆէ վէյ միայն կարենայ ցոյց տալ յանուանէ հաստատելու համար յօդուածին անհարազատութիւնն և ստոյգ գրութեան անվաւերութիւնն, Ֆէ վէյով միայն կարենայ ցուցընել այդ ննջեցեան հեղինակ եղող անձն, ոչ միայն հրապարակաւ ներում կը խնդրեմ իրմէ, այլև կ՚երդնամ կը գտնեմ գինքն և ձեռքը կը համբուրեմ. բայց եթէ չկարենայ այս պայմանով հաստատել իւր սև գրպարտութիւնն, ՎԱՏ ՍՏԱԽՕՍ մ՚է միայն, այլ փառաւոր տիտղոսը պիտի կրէ իւր ճակատին վրայ յաւիտեան և յաւիտեան դատապարտեալ արարած մը միայն պիտի մնայ գրական հրապարակին վրայ, ոչ միայն կամաց ճշմարտութիւնը խեղաթիւրող, այլև անարդող Խիէքճեանի յիշատակին, այն անձին՝ որ տասնեակ Արշակունիներ արժած է, իբրև ահեղ գեղձ ազգասէր և իւր սիրելեաց մարտիրոս։

Կոստանդնուպոլիս, 11 փետրուար 1884։ ՍՄԲԱՏ

Կ. Պոլիս, 27 Ֆեվրուար 1884

Բա՛ցեկո՛, Միթէ ատոյգ է որ մեր գարը կիրառութեան և մեքենագործութեան դար մ՚է, միթէ իրաւ է որ բնութեան ոյժերուս կիրառութեամբ՝ մարդս պիտի յաջողի վերջապէս նիւթին տակ էութիւն և մեքենային արտադրել տալ երևոյթներ որ անշեջելի, անընդհատելի, անտեսանելի են, և ապա ինքզինքը գերագոյն մարդամեքենայ՝ պիտի նախատ ահ իր ստեղծած էակներուն կամ դոյութիւնեցուն վրայ այն ափանալոմով որով մեր Աղբ սլին ժողովը կ՚հիանար անցած օր իր լեռնէր Յանձնաժողովին մեկն և հատարակութեան անյայտ հայ-ուսուցչին կամ դեսպանական քանակցութեանց և գանիսի, կամ լաւ կա՛ս է ըսել, էլեկտրական

տեղեկագրին վրայ։ Եթէ այդ դուշակութիւնը իրագործելի է Անգլիոյ և Ամերիկայի համար, եթէ ինչպէս Աստուծոյ էութիւնը կամ չէութիւնն, նոյնպէս աննշան թուլատարրի և հիւլէի մը դոյութիւնն մեքենայի միջոցաւ կ'ապացուցուի հիմակ, և թերևս օրին մէկը մեքենան սրտի, իմացականութեան և հանճարի գործը կատարէ, եթէ այժմ մեքենան կ'լսէ, կ'սիրաբանէ, կ'իմաստասիրէ, կ'թուաբանէ, կ'դրաչարէ, եթէ իրաւ է որ կան երջանիկ մարդիկ որ խորհելու, սիրելու, նահատակուելու տապազուկէն ղերծ՝ ճարտարամիտ մեքենային անձնատուր եղած են և անթիւ ճախարակներու հոլովմամբ կ'հոլովեն իրենց մեքենական կեանքն, եթէ ստոյգ է այդ ամենն մեքենաւան և մեքենաչարժ երկիրներու համար, մեզի համար, Հայոց համար դեռ ևս անհաւատալի և անգործադրելի են։ Վասն զի Հայք կ'ուզեն ապ ջոկ ՔՆարդին, ինչպէս կ'ըսեն հին իմաստասէրներ, ազատ իմացականութեան, չահատակութեան և անձնազոհութեան բաժինն հանել, և ճակատագրային պատգամներ մերժելով՝ մեքենան գործոյն տէր և իշխան չմանչել։ Գովելի ինքնիշխանութիւն, ազանչելի ինքնօգնութիւն և ինքնօրինութիւն։ Զեն նեղգործեր իր վրայ նորելուկ դաս ու կանոն, նոր ճշմարտութիւն և սկզբունք, նոր ճարտարութիւն և դիտութիւն, այլ իբր Աբրահամայ հարազատ զաւակ՝ իւր անհատական անկախութիւնը կ'սիրէ, կ'սիրէ ճախրել անտառուտ ու ապառաժուտ շաւիղներու մէջ, թափառիլ սանձարձակ ապալեր բաւիղներու մէջ, անգոսնել ոտք ու ձեռք, կուրծք ու մէջք սեղմող կապեր, և կ'ընտրէ իր նժոյգն ու ջորին քան վայրաչարժն ու երկաթոտղին, կ'ուտէ աւելի ճաշակով սոխն ու սխտոն քան համեմուտ համադամները, կ'սիրէ աւանդուս թիւնն քան պատմութեան դասերը, ըմպարուտ պատառ, ծերուկ անցեալն, քան նոր անբիծ կոյսն, կ'փարի հին դրութեան, հին տարազի և կոշոց քան նոր ճշմարտութեան և նոր պատկերներու, թէև իր չրթերուն վրայ կ'թռթռին նոր, չոզուն բառեր, թէև իր աչերուն մէջ կ'ցոլանան ճշմարտին ու գեղեցկին նշոյլներն և ամեն տեսակ ղեղեցկութեան և ազատութեան բեկբեկուն չողերը։ Այսպէս հին դրութեան մարդիկ ենք ոգւով, թէև առ երևոյթս դիւաերու և յեղաշրջութեան սիրահար։ Մեր ազգային գործերու ղեկավարներն ոչ կողմնացոյցի և ոչ պատուհասաւոր չոգենաւի կարևորութիւնը չեն զգացած տակաւին, այլ կ'ընտրեն առագաստաւոր նաւով նաւարկել մրրկալի ծովերու մէջ, և՝ հակառակ հովերու ենթակայ, չարունակ կ'տարուբերին նոյն տախ

ժանին մէջ, յաջող հով մը գտնելու յուսով, և ամիսներ ու տա-
րիներ անցնէին եաև՝ ինքզինքին նոյն դժին վրայ կ'գտնեն,
մինչդեռ չոգնչարժ նաւերու վրայ գտնուող նաւապետ ու նաւ-
որդ ապրէն մշտնջենը կտրելով՝ անվտանգ հասած կ'ըլլին նաւա-
հանդիստը։

Եւ ահա այդ էակն, Հայն մանաւանդ ներկայ ժամանակիս
մէջ, սովորականէն աւելի կ'զգայ, կ'խորհի, կ'չարժի և կ'բոլորէ
շատ կենսական հանդիսներու բոլորտիքն, նման թիթեռնիկներու
որ ճրագին բոլորը կ'պարեն մինչև որ այրին, և իրաք կ'պարէ և
չափէն աւելի կ'պարէ Հայն այս եղանակիս՝ ելեկտրական չինծու
և հոգեկան կեղծ ու պատիր ցոլացումներու ծովու մը մէջ, չէ
թէ թատերական թելերու և մեքենական անիւներու չնորհիւ,
այլ ինքնուրոյն, ինքնաչարժ զօրութեամբ, և սակայն հեռուէն
դիտողն իր այդ մոլորադին պատյաններն ու ոստումներն դոլ ի
միտս բացատրէ թերևս. — Բայց մինչ Վէրտիի թատրոնա-
կանին կամ սրամիտ մղձային գործերու ասպարէզը, որ այսպէս
կ'ցնծալուտեն, ելևէջ կ'գտնան, իրրև սիրամաշ ուրուականներ
կ'հևան և իւրաքանչիւր հրատապ ակնարկներ կ'ընչանեն այդ պարա-
մոլ էակներն. ոչ կ'երթան։ — Կ'պիտեն անշուշտ այն պղտոտային
ուր մեայն փոչի, մուխ ու պատրանք կ'գտնուին, կ'խաւժեն՝ այն-
քան հոգի, չունչ և քիրտ թափելէն եաև՝ այն ուղին որ անել
է, քանի որ մեկնակէտն աննպատակ է . . . ։

Բայց, բարեկամ, արի գաղնանք այս տեսլեան այլաբանութենէ
կոշտ իրականութեան։ Ինչէ կարգ մը կարևոր համարուած խնդիր-
ներու կարդադրութեան առթիւ՝ մեր գործող մարմիններու և
գրող կարդացողներու ընթացքը։ Իրաք՝ ամենուն վրայ կ'տես-
նուի հոդեմաչ գործունէութիւն, որ դուշ ու դադար չունի,
սակայն չունի նաև ոչ որոշ ուղղութիւն և ոչ նպատակ։ Նպա-
տակի այս անորոշութիւնն աւելի ևս աչքի կ'զարնէ՝ երբ նայիս
որ վարչային անդուռին դանազան թելերն, որ սղղային իրաւ-
անց և օրինաց դասը սիտի նուագելն ներդաշնակութեամբ,
դատ դատ տարբեր եղանակներ կ'հնչեն, ինչպէս նաև միեսուրէ
դրիչներն անհամաձայն և առանց նախատեսի հնչիւններ կ'արձա-
կեն և սոսկալի վատաձայնութիւն (cacophonie) մը կ'սրատարեն,
վատաձայնութիւն՝ որ աւելի հեռաւոր ականջներ կ'վիրաւորեն
քան թէ մուն նուագածուներու թաղանթը։

Եւ արդարև՝ պատահմամբ ըսեմ թէ ոչ դիտամբ՝ այլ և այլ
ա տրեր կարևորութիւն ունեցող, այլ դատ դատ լուծուելու կա-

թեան խնդիրներ յուզուելով՝ Ազգային ժողովին և վարչութեան կանոնը բեռնաւորուած կ՚տեսնեմ։ Առանձնաշնորհումներու, ելմտից, վարչային, Ըստ, Ըմբռնած խնդիրներ շատն-ի խուռն կ՚զբաղեն Քաղաքական, Կրօնական, Համագումար, Ընդհանուր ժողովներու և ատոնց յարակից պահանջոն դիւաններու, Խորհուրդներու և յանձնաժողովներու դլուխն ու միտքն, բոլորն ատէպ իրարու հետ կ՚ընդհարին, նոր նոր կնճիռներ, անհամաձայնութեան և երկպառակութեան նոր կայծեր կ՚հանեն, ժամերով և օրերով խորհրդածութեան և բարձր քաղաքագիտութեան նիւթ կ՚լինին և կարծես թէ այնպէս չարայարուած են որ և ոչ մին օրինաւոր, հիմնական և ազգաշահ լուծում մը չդտնէ, յետ հանդարտ և հասուն քննութեան։

Գաղտնի թելերը միշտ մղած են և կ՚մղեն՝ ազգային նուիրականն իրաւանց դէմ՝ օտարին խորամիտ կամ պարզամիտ գործակիներն։ Ահա տես ինչ ողբալի և կնճռոտ վիճակի հասուցին Կաթողիկոսական ըսուած խնդիրն, տես ինչպէս միսը թողլով հևն ի հև ատուերին ետևէն կ՚վազեն մեր որսական բարակներն։ Ինչ վտեմ նախաբան, և ինչ սարկական վախճան . . . ։ Ականջը կանչէ Խէկէլէն որ կ՚վոխսար չորս պատի մէջ, մինչդեռ դու հրապարակաւ կ՚պոռայիր. — Արարատայ Աթոռին ինքնօրինութեան ի նպաստ բոլոր պաշտօնական թղթերն պարզ ցոյցեր են, հարսանեաց անլոյս ընթացներ են։ Արդէն ամեն բան վաղուց եփուած ու կերուած է, այժմ անդանին պնակները կը լուան կոչնականներն, մինչդեռ դուրսը ժողովուրդը կարծէ թէ հացկերոյթը նոր պիտի պատրաստուի, հարսն ու փեսայ նոր պիտի պսակուին։ — Եւ ո՞վ է մեղաւոր եթէ կնքահայրն օտարադէմ անձ մ՚է, ո՞վ է մեղաւոր՝ եթէ պսակի արարողութիւնն դեսպան մը կ՚կատարէ։ Ազգային ժողովն իր նախապահին հետ, փոխանակ դործն առջի օրէն, Ազգին կամաց համեմատ, հիմնովին տնօրինելու, լիազօրի մը կ՚յանձնէ, որ կաթողիկոսական խնդրոյն ամենապարզ կրօնական բնութիւնը մոռնալով՝ քաղաքագիտական նկատումներու մէջ կ՚ալկոծի, ուղիղ դիծը կ՚թողու և ոլորուտ շաւիղներու մէջ կ՚մոլորի և ապա կ՚բռնուի ցանցի մը մէջ որմէ ազատելիք չունի։ Հիմակ կաթողիկոսական Յանձնաժողովն Ազգին հետ կ՚սպասէ, թէ՛ղ սպասէ եթէ դործ չունի, որ խնդրոյն լուծման պատգամն հիւսիսէն փչէ, որ Պ. Նեսիլօֆ Բեդրոսեան կէն առնելիք հրամանն ընտրութեան 1866ի կամ Պալթինեայի տրամադրած եղանակի վրայ՝ Ազգային Պատրիարքարանի հա-

ըրդէ։ Այդ հրամանն արդէն Պ. Նեռիլօֆի դրկանն է անշուշտ, որ թերևս մայիսի սկիզբը տրուի, սակայն որքան յապաղի այնքան անոյշ պիտի դայ, այնքան խնդրոյն բուն առանցքը պիտի հեռանայ, կմախքը թօղլով, այնքան կաթողիկոսական Ցանձնաժողովին չինովի պարծունէութեան՝ յաղթութեան դոյն մը պիտի տայ, երբ իվերջէ պատգամն արձակուի և ցցի ընտրութեան կերպն ընդունուի։ Ահա այն ժամանակ պիտի դոչէ նա. Veni, vidi, vici, բայց ո՛ր դայիր, ի՞նչ տեսար, ի՞նչ յաղթանակ տարիր, մարդ Աստուծոյ կամ Մօ՛տկի։ Գոչիր Ռուսիոյ դեսպանատունն, տեսար Պ. Նէռիլօֆն և ձեռքը ծրար մը թուղթ, որոց մէջ Թուրքիոյ բոլոր Հայոց Պատրիարքը պարզ Առաջնորդ կ'կոչուի, որոց մէջ Ս. Աթոռն Նորին Վսեմութեան բերնով բոլոր Առաջնորդներու հրամաններ և Նորին վսեմութեան թարգմաններու շնորհիւ Ակնարկայ, Սայ ու երեսատիւ մի դատ՝ յաղթութեան պատուէրներ կ'ուղղէ որ կաթողիկոսի ընտրութեան համար պատգամաւորներ պատրաստեն և էջմիածին դրկեն, տեսար որ Պարոն Նէռիլօֆի ազդային առանձնաշնորհումներուն բարձրադոյնն Թուրքիոյ մէջ անգամ սիրուն քմծիծաղով մը կ'արհամարհէ, և այս ամենը տեսնելով միթէ յաղթանակ տարած կ'լինիս . . . : Միթէ ասոր անոր տունն գազտուղդի նիստեր կազմելով կարծես թէ յաղթութեան կամարներու ներքև՞ կ'գտնուիս, միթէ ինքնին պարզ խնդիր մ'այնքան կնճռոտելէն ետև՝ յաղթանակ տարած կ'լինիս՝ եթէ մէկ աննշան կնճիռն, ընտրութեան եղանակն իսկ պարզես։ Ո՛հ, այդպիսի յաղթանակներ (trophée) կը նմանին այն վիլակներուն որ նազելաբար լոկ օդին մէջ կ'դառնան՝ առանց կծիկ չինելու։ Եւ ի՞նչ բան ունի Արարատեան Աթոռոյ խնդիրն գեսպանական մթնոլորտի մէջ, եթէ մեր Ս. Պատրիարքն իրօք Ռ. Դրան և Ազգին մէջ եղած յարաբերութեանց միջնորդէ միայն . . . բայց . . . բայց դու, բարեկամ, մի սպասեր որ ամեն բան բացէ իբաց խօսիմ, և եթէ չատ ժամանակ, թուղթ ու մելան ունիս, ծրագիրներ յօրինէ կաթողիկոսական խնդրոյն լուծման ամենէ բանաւոր և օրինաւոր եղանակներու վրայ, որոնց վոյթն, ով մտիկ կ'ընէ, քանի որ մանաւանդ Ազգային ժողովն յափշտակուած, սքանչացած է քաղաքապետական նոր հրաշակերտի մը վրայ և իր լսողութեան կարողութիւնն այնքան նրբացած՝ որ միայն սերոբէներու և քերոբէներու հեչտալուր ձայնին կ'հակի։ Եւ համագումարն և պարզատումարն՝ առանձնաշնորհումներու նախանձախնդիր՝ նեբէրներ կը

տեղան, և համագումարն ու սրբագումարն իրենց Ս. Գաւրի-
արքին եղած անարգանաց անտարբեր, ոուսական ոտնձգու-
թեանց և ուղղակի յարաբերութեանց համար անհոգ՝ Սոյ կա-
թողիկոսի իբր անկախ գլխէ գլխ, Պէրլի դէմ չանթեր կ'ար-
ձակեն, և համագումարն ու դիւանագումարն՝ ներկայ աղէտին
ծանր պարագայից միայն անմոռաղիր՝ այնքան տարիներէ վեր
մեռելական քուն քնացող Սոյ խնդիրը կ'նորոգեն, այնքան որ
Կիլիկիոյ Կաթողիկոսը կերպով մը կ'բռնադատուեն գրելու այն
անխոհեմ և ուռուցիկ բողոքագիրն՝ որով Ազգային Ազգա-
գահակալին ընտրութեան չմասնակցելու զանազան փաստեր մէջ
կ'բերէ: Եւ ահա արդէն պղտորած խնդիր մ'աւելի ևս պղտո-
րելու նոր խնդիր, ահա դիւանագիտական ճատրակի մ'առջև
նստելով՝ քարերն՝ ըստ արտաքին թելադրութեան՝ աջ ու ահեակ
անգէտս քշելու սարկութենէ յառաջ եկած նոր չհատուկու-
թիւն մը, որու վախճանն՝ այս ընթացքով, կրնայ նոր նոր աղէտ-
ներ բերել Ազգին գլխուն: Ահա համագումարն ու դիւանագու-
մարն որ բողոքներ կ'յօրինեն Սոյ Կաթողիկոսի դէմ, և չեն սպա-
սեր որ այդ Սիսն ու իր Կաթողիկոսն ինքնին թաւալգլոր տա-
պալեն, երբ Նորընթերէլ Կաթողիկոսն իր գահը բազմի, և Ազգ ու-
վարչութիւնն մեծ հնհնուքէ մ'ազատին: Սակայն հակասական
միտումներ ոչքան ճիւաներ հասուցին և դեռ ևս ինչ ճիւաներ
վերապահուած են մեզի համար, միայն Էջմիածնայ Աթոռը կաշ-
կանդող իշխանութիւնը հարիւրաւոր տարիներէ վեր՝ Մեծին
Պետրոսի կտակին պէս՝ արձանագրած է իր քաղաքական ծրա-
գրին մէջ, և մայր Աթոռոյ քաղ խնդրոյն արագ լուծման ոչքան
խոչընդոտն եղած է Սոյ կաթողիկոսութեան արդի անկեալ
վիճակն՝ մեր պաշտօնական մարմիններուն մտքէն անգամ չանց-
նելու: «Միայն պահելն Էջմիածինն ազատապրել է» ըսաւ երբեմն
անուանի հայրենասէր մը, և այս մտօք Ա. Մաշտոց չատ բաներ
գրած է, բայց որոնց վրայ, երբ դիւանագիտական նուրբ հա-
շիւներ կրօնական ուխտեր ու երդումներ իսկ դրժելու կ'մղեն
մարդիկն . . . : Եւ միթէ Մկրտիչ կաթողիկոս ունի՞ իրաւունք
գրելու այնպիսի բողոք մ'որ գրեթէ մոռցընել կ'տայ Էջմիածնայ
խնդիրն և չատերուն հացին եղ կ'քսէ . . . ունէր և չունէր: Ու-
նէր սա ժամ պատճառաւ որ սրբազնութեան գործ մը պիտի
լինէր՝ Գէորգ կաթողիկոսին կողմէ իրրև հեռաթել և հերյաշխոյ
բանագրուած Աթոռի և թեմականաց մասնակցութիւնն ընտ-
րութեան, չունէր՝ եթէ Ազգին բարձրագոյն շահերն ի նկատի

առնով՝ սպասէր, առանց բողոքելու՝ ընտրութենէ ձեռնթափ մնար և իր հալիւն Մայր Աթոռին հետ կաթողիկոսի գահակալութենէ եռաք տեսնէր . . . բայց այսպիսի համագումարի մ՚որ երբեմն Մկրտիչ կաթողիկոսին երեսին, վեզարին և փիլոնին դոյնով անգին ժամեր և օրեր անցուց, այնպիսի Ազգի մ՚որ իր Պատրիարքարանի ձեռօք Սուր կաթողիկոսի Պէրճէն հանելու տարիներով հոգ չտարաւ, այնպիսի ժողովրդեան մ՚որ իր բարեկամը թշնամիէն, իր իրաւունքն պարտքէն, իր շահը վնասէն զանազանել չգիտէ, այդպիսի կաթողիկոս մը կ՚վայլէ . . . հիմակ թող վարչութիւն, ժողով, դիւաններ, խորհուրդներ, համազօրներ ելնեն քակեն այդ հանգոյցը . . . ահա իրենց հոգւոյն փառասիրած զբաղմունքն . . . թող մայիս ամիսն մտնենայ, և երանի՛ թէ չմտնենայ՝ չէ թէ մէկ այլ երկու տեսակ սպասնալիք հերձուած . . . մին Արարատայ և միւսը Սիսի կողմէ, և Թուրքիոյ Հայ անճարակ ժողովուրդն՝ որ սուրբին դիմելու, որ Աթոռին փարելու դժբաղդութեան առջև . . . մէջտեղը չմնար . . . :

ՇԱՀՆՈՒՐ

ՄԱՏՈՒՌ

Վաղուց զգալի էր քաղաքիս Հայ հասարակութեան նոր գերեզմանատան մէջ մատուռ մը կանգնելու կարևորութիւնն։ Ազգային վարչութիւնը թէև տրամադիր այդ շինութեան ձեռնարկել, սակայն նիւթական ծախուց ծանրութեան առջև կ՚ընկրկէր, և թերևս հեռաւոր յոյս մը կ՚տածէր որ բարեպաշտ և բարերար ձեռք մը պիտի կանգնէ Աստուծոյ այդ տունը։ Եւ ահա Մեծ. Գէորգ Էֆէնտի Սուլթանեան, որ ոչ միայն իր աղնուախոհ բնաւորութեամբ, բանիբուն հայրենասիրութեամբն և պատուաւոր դիրքով հանրածանօթ է քաղաքիս Հայ և օտար հասարակութեանց, այլև իր մարդասիրական ոգւոյն կ՚վայելէ ամենուն համակրութիւնն, կ՚առաջարկէ կառուցանել իր անձնական ծախիւք այդ մատուռն և իր առաջարկը Գեր-

Ս. Աթոռոյդ հօր մինչոյսաւ Ազգային ժողովին կ'մատուցանէ։

Այս առթիւ ի պաշտօնէ վախանակուած դրութիւնները յօժարակամ կ'հրատարակենք, դրութիւնները որ աւելի բարձր կ'հռչակեն քան մեր գրիչն Բարերարին վեհանձն և ազգասէր ոգին և իր ըրած նուէրն աւ Ազգն, որուն սրտագին երախտագիտութեան յարատեւ իրաւունք կ'ստանայ կանգնելով այդ անմահ յիշատակարանը։

Գերապատիւ Սրբազան Հայր,

Ազգային Նոր Ղերեզմանատան մէջ մատուռ մի կանգնելու մասին Ձեր Սրբազնութեան ասկէ չուրջ վեց տարիս առաջ իմ հետ ունեցած չնորհալի բանակցութեանց մէջ յայտնած հոգեկունէ խօսքերն այնպիսի ներշնչում մի տղեցին յիս, որ փափաքեցայ Ազգային Նոր Ղերեզմանատան այդ կարեւոր պէտքն լրացընելու համար իմ անձնական ծախիւք վայելչակերտ մատուռ մի կառուցանել ի փառս Աստուծոյ, և նուիրել զայն յանուն սուրբ Յարութեանն Քրիստոսի, ի վայելումն սիրելի ազգիս Հայոց։

Արդ՝ Գերապատիւ Սրբազան Հայր, կու գամ ներկայիս յայտնել Ձեր Սրբազնութեան թէ՝ իմ նոյն փափաքանաց համեմատ՝ ամեն նախապատրաստութիւնք արդ իւնաւորուած և նոյն իսկ յատակագիծն պատրաստուած լինելով՝ ահա ներփակեալ ի սմին կը յանձնեմք զայն Ձեր Սրբազնութեան, խնդրելով որ բարեհաճիք գաւառիս Երեսփոխանական պատկառելի ժողովոյ նկատողութեան ենթարկել իմ առաջարկս և յատակագիծն, որպէս զի չինուելու մատեան ըստ ամենայնի բոլոր հանդամանացն վերահասու լինելով արժան համարին նշանակել Ազգային նոր ղերեզմանատան մէջ յարմարագոյն տեղի և յայտագրել մեզ, և անյիջապէս ձեռնարկութիւն լինի չինութեանց։

Կաջայոյս լինելով, Գերապատիւ Սրբազան Հայր, որ մեր սոյն փափաքի ընդ փոյթ իրագործման պատուազատչաճն պիտի տնօրինէք, մնամ որդիական խոնարհութեամբ Գերապատիւ Սրբազնութեան Ձերում

Զմիւռնիա, 30 յունուար 1884։ ԳԷՈՐԳ ՍՈՒԼԹԱՆՅԱՆ.

Առ գերապատիւ Տ. Մելքիսեդեկ Սրբազան Արքեպիսկոպոս Մուրատեանց բարեխնամ առաջնորդ Հայոց և նախագահ Երեսփոխանական ժողովոյն Զմիւռնիոյ։

Մեծապատիւ և բարեպաշտօն Սիրելի,

Ընկալաք Ձեր շնորհաւոր նամակն թուագրեալ յՅՕ յունուարի տարւոյս, որով կը յայտնէք Ազգային նոր ժողովոյն մէջ մատուռ մի կառուցանելու Ձեր բարեպաշտական փափաքն, և չինութեան յատակագիծն իսկ կցորդած էք Ձեր նամակին, խնդրելով որ զաւառիս Երեսփոխանական ժողովոյ ուշադրութեան յանձնեմք Ձեր առաջարկն և յատակագիծն, որպէս զի յետ վերահասու լինելոյ չինութեան հանգամանացն՝ արժան համարի չինութեան վայրն նշանակել և Ձեզ յայտարարել։

Արդ՝ ձեր առաջարկն և յատակագիծն թէ Ազգային վարչութեան և թէ Երեսփոխանական ժողովոյ ուշադրութեան յանձնեցինք, որոց և մեծ գոհունակութենից հաւաստիքն ներկայիս յայտարարելով Ձեր սիրելութեան՝ կը փութամք յայտնել նաև թէ՝ Երեսփոխանական ժողովն իւր ԽԶ. նստին մէջ ուրախութեամբ ընդունելով Ձեր շնորհաւոր առաջարկն՝ մեծ գոհունակութեամբ իւր հաւանութիւնն տուաւ որ Ձեր բարեպաշտ փափաքանաց հաւեմատ ձեռն արկանէք իշինութիւն մատրան Ազգային գերեզմանատան մէջղ այն վայրին մրայ՝ որ գերեզմանատեղեաց կանոնաւոր բաժանմանց ժամանակ մատուռի համար որոշուած բաւական ընդարձակ վայր մի է, գծուած գերեզմանատեղւոյն մէջ։

Երեսփոխանական ժողովն որոշեց նաև որ իւ նշան Ազգային երախտագիտութեան Ձեր անմահ անուան համար վայելուչ յիշատակարան մի կանգնուի չինուելու մատրան պատշաճաւոր մի կողմը։

Երեսփոխանական ժողովն կը մաղթէ Ձեզ և Ձեր աղնուափայլ Գերդաստանին երկար և երջանիկ կեանս. այսու հանդերձ յանուն Ձեր Ընտանեաց յատկացրնելով կը նուիրէ նաև յատուկ գերեզմանավայր, և զոր ի կամս Ձեր կը թողուս ընտրել չինուելու մատուռն շրջապատող վայրին պատշաճաւոր մի կողմը, և որոյ վայելչութիւնը չինուելու մատրան նկատմամբ Ձեր քաջակիրթ ճաշակն կարող էք որոշել։

Երեսփոխանական ժողովն կը յուսայ որ Ձեր բարեպաշտական այդ սուրբ և ազդօգուտ փափաքն յաջողութեանէն կատարոյ, և Ձեր հանրածանօթ գործունէութեամբ ի գլուխ հանուելով, նորաչէն մատրան օծումն յանուն սուրբ Յարութեանն Քրիստոսի (ինչպէս փափաք յայտնած էք ձեր նամակին մէջ) կը կա-

տարուի առաջիկայ տուրբ Զատկի երկրորդ օրն, որ նորահաս տատ գերեզմանատան համար որոշուած տարեդարձի օրն է։

Երեսփոխանական ժողովոյ սոյն որոշմունքն ուրախութեամբ հաղորդելով Ձեզ, և խնդրելով յԱստուծոյ շնորհել Ձեզ կար և զօրութիւն ի պսակումն բարեպաշտական փափաքանացդ, և յաջողութիւն յամենայն բարիս ի հոգևորս և ի մարմնաւորս, մնամք ողջունիւս սիրոյ և օրհնութեան աղօթարար,

Ա. աջնորդ Զմիւռնիոյ

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Զմիւռնիա, 5 փետրուար 1884։

Ա. Մեծապատիւ Գէորգ Սուլթանեան, ի քաղաքիս։

ՄԻ ՆՈՐ ՆՈՒԷՐ

Ազնիւ պարտաւորութեանց ճանաչման և կատարման արդիւնք եղող ներքին գոհունակութենէ վեր կայ բարձրեան հաճոյք մ'ար միայն մեծ հոգիներու բաժինն է։ Ա որ հաճոյից գլխաւն է գոհաբերութիւնն ու բարեգործութիւնը։ Երբ անուանի կայսր մը կ'ըսէր «Կորուստ մ'է ինձ համար այն օրն որ չեմ արած իմ բարիքս» կ'արտայայտէր ճշմարտութիւն մ'որ ինքնասիրին, աշխարհասիրին և անձասիրին անիմանալի էր։ Եւ իրօք ոմանց համար ապրիլ է բարիք ընելն, թշուառին հաց, հիւանդին դեղ, տգէտին լոյս հայթայթելն հրճուիլ և երանութեան աղբիւրները գտնել է, ինչպէս կ'հրճուի հանքահանն երբ իր տապալին ներքև կ'տեսնէ որ ժայռն ոսկի երակ մը կ'ցոլացնէ։ Մարդկային յառաջդիմութեան ալ ոսկի երակներն են, եթէ ներելի է այսպէս ըսել, մտքի զարգացումն, գոհողութիւնն և մարտիրոսութիւնն։ Եւ անանք որ մարդկութիւնը կ'սիրեն, անոր համար կ'զոհեն, անոր համար կը հալածուին և կ'նահատակուին, ունենալով բնապէս նիւթական, բարոյական կամ մտաւորական զօրութիւն, զարգացման ամենէ վսեմ եղանակը գտած են և միշտ երանելի են։

Այս դիտակցու թիւնն անշուշտ ունի և Սպարթալեան վսեմ Ցովհաննէս էֆէնտին, քանի որ աղգային ամեն բարենպաստակ հիմնարկութեանց և ձեռնարկներու չզլանար իր արդիւնաւէտ գործակցութիւնն, չձանձրանար միշտ սատարելէ, վասն զի բարերարու թիւնն իր տիրական կիրքն է, վասն զի այդ բարերարութենէ ղգացած հաճոյքն իր մեծ հոգւոյն անարատ անունդն է։

Բաւական չէ որ հայրենասիրական խնամքը հսկած է՝ ուղղակի և անուղղակի իր ղդացմանց թարգմանն և դործակատար Մեծ. կարապետ էֆէնտի Սպարթալեանի ձեռօք, Հռիփսիմեան վարժարանի վերաչինութեան դործն վրայ, բաւական չէ որ քանիցս նիւթական ձեռատու նուէրներ չէ խնայած, այս անգամ ևս իր հոգատարութեան մի նոր ապացոյցը տուաւ՝ չնորհելով նորաչէն վարժարանին չորս դոյդ երկաթեայ ձուլածոյ դռներ, որոնք կարևոր և մեծածախ պէտք մը լեցուց։

Այս նուիրատուութեան առթիւ Հռիփսիմեան վարժարանի չինուհեան ժիր և դործունի ցանձնաժողովը, որ անձկուն յարատևութեամբ իր առանձնաձ դործն շարունակեց՝ հետևեալ դրութիւնը հաղորդած է մեզ ի հրատարակութիւն.

Վսեմաշուք Պրեզի,

Սուրբ Հռիփսիմեան վարժարանի վերաչինութեան ցանձնաժողովս կը փութայ ներկայիս իւր խորին չնորհակալութիւն յայտնել Ձեր Վսեմութեան, որ բարեհաճեցաք չորս դոյդ երկաթեայ ձուլածոյ դուռներ չնորհել ի նուէր նոյն վարժարանին, որով նորա պարագաները այս տեսակետեն ևս լրացնելու մարդ ապրումն ունեցայք։

Ձեր Վսեմութեան ան աղդ օգուտ նուիրատուութիւնը, իրրև յաճախ անգամներով առիթ տուած են Աղդային վարչական մարմիններու իրենց ջերմ չնորհակալիքն յայտնելու, նոյնպէս և ցանձնաժողովս ուրախութեամբ կը կատարէ այդ քազցր պարտքն՝ Աղդային երախտագիտութեան թարգման հանդիսանալով, և յաղթելով երկարութիւն երկանիկ կենաց Ձերդ Վսեմութեան և հանդէն Սպարթալեան Աստուածածնաձր Ցովհին,

Ընդհանուր սիրոյ և օրհնութեան մեծամեծ ազդարարք

18 փետրուար 1884 *Առաջնորդ Ջմիւռնիոյ*

Ջմիւռնիա։ *ՄԵԼԳԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ*

Ա. Վսեմապատիւ Յովհաննէս էֆէնդի Պալթաճեան, իբաղաքիս։

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ներկայ (փետրուար) ամսոյս 6ին Հռիփսիմեան Վարժարանի չինուհեան Պատ. Ցանձնաժողովը յօդուածոյն մը հրատարակելով կ'յայտնէր թէ՝ Գաւառական ժողովին մի որոշման վրայ յենլով՝ արժան դատած է հանգանակութիւն մը բանալ նաև կանանց մէջ, որ կ'փափաքին Հայ օրիորդաց կրթութեան գործին մասնակցիլ։ Այս հանգանակութեան դումարն պիտի գործածուի Վարժարանի պարտապահական բոլոր պարագայիւք չինելու։ Եւ Պատ. Ցանձնաժողովը հրաւէր կ'կարդար բոլոր Հայ Տիկնանց որ փութան յօժար կամօք դրկել իրենց նպաստն Պատ. Ցանձնաժողովոյ Գեր. Նախագահին, և կ'յաւելլոր որ իրենց անուններն պիտի արձանագրուին Վարժարանի նուիրական չիշատակարանին մէջ։ Այնուամենայնիւ Տիկնայք վհհանձնօրէն պատասխանել սկսած են այս հրաւէրին և արդէն հանգանակութեան ցուցակն ցոյց կ'տայ որ Գեր. Նախագահին մօտ դանձուած գումարն կ'հասնի 104$^{28}/_{100}$ ոսկիի։

Պատ. Ցանձնաժողովը երկրորդ յօդուածոյն մը պիտի հանէ մարտի 1ին, և հանգանակութեան արդեանց վրայ իր դոհունակութիւնը պիտի յայտնէ անշուշտ և պիտի յաւելու թէ՝ ըստ որում Գեր. Ս Առաջնորդ հայրն Կ. Պոլիս պիտի ուղևորի, Արժ. Տ. Յովհաննէս քահանայ Մինասեան պիտի դանձէ հանգանակելի նուէրներն, և թէ պէտք է որ անոր ուղղուին դրամները

Խմբագրութիւնս հաշակելով Ազգիս Հայ կանանց և օրիորդաց կրթասիրական առատաձիրտ մասնակցութիւնն այսպիսի ազգաշահ ձեռնարկի յաջողութեան համար, պարտ կ'համարի հրատարակել մինչև ցայսօր հանգանակուած նուէրներուն ցուցակն, որ է։

Օտանէան ոսկի

Տիկին Մարգարիտ Յակոբեան . . . 1
» Թագուհի Կ. Յակոբեան . . . 2
Օրիորդ Էլիզա Կ. Յակոբեան 50
Տիկին Նեկտարինէ Ս. Սիմբիհիւսլեան 2
» Վարդուհի Յ. Սիմբիհիւսլեան . 1
Օրիորդ Մարիամ Յ. Սիմբիհիւսլեան . 1
Տիկին Մարիամ Ղազարոսեան . . . 1
» Տիգրանուհի Յ. Վարպետեան . 2
Օրիորդ Զարուհի Վարպետեան . . . 2
Տիկին Մարիամ Մ. Մամուքեան . . . 1
» Վառվառէ Մեբկերեան . . . 2 50
» Հռիփսիմէ Յ. Գարագաշեան . . 3
Օրիորդ Թագուհի Թ. Տամիճեան . . 2
Տիկին Տուտու Ա. Տամիճեան . . . 88
» Գարծանք Գ. Սուլթանեան . . 5
» Տիգրանուհի Ս. Կոստանդեան . 1
Օրիորդ Զապէլ Ս. Կոստանդեան . . 50
Տիկին Մարիամ Գ. Գուպլի 2
Թարեպաշտուհի ոմն 1 25
Տիկին Սօֆի Թ. Սպարթալեան . . . 5
» Տուտու Մ. Մազսուտեան . . 2
» Մարիամ Կ. Սպարթալեան . . 1
Տիկին Հռիփսիմէ Պ. Պադըրճեան . . 2 78
» Վարդուհի Գ. Զիլինկիրեան . . 2
» Գայիանէ Ս. Ալաճանեան . . . 2
» Սրբուհի Յովհ. Սպարթալեան . 10
» Իսկուհի Ե. Սպարթալեան . . 10
» Նոյեմզար Յ. Սպարթալեան . . 10
» Տիրուհի Յ. Սէրայտարեան . . 2
» Մարիամ Ս. Տէօվէրճեան . . 1
Օրիորդ Մարիամ Գ. Պէրկամլեան . . 2
Տիկին Զապէլ Մ. Հալէպլեան . . . 1
» Կիւլա Կ. Զաքիեան 2
Օրիորդ Գարծանք Գարծանքեան . . 3

Տիկին Հռիփսիմէ Գալէնտէրեան . .	1	50
» Մարիամ Ա. կարապետեան . .	1	
» Հռիփսիմէ Նուպարեան . . .	1	
Օրիորդ Զարուհի Նուպարեան . . .		37
Տիկին Թագուհի Գ. Էլմասեան . . .	6	
» Վարդուհի Գր. Էլմասեան . . .	3	
» Մարիամ Ս. Էլմասեան . . .	2	
Օրիորդ Վիրգինէ Էլմասեան	1	
» Լուսիա Էլմասեան	1	
Տիկին Սրբուհի Մ. Թէքպըլըզեան . .	2	
» Մարիամ Գ. Եսայեան	5	
Օրիորդ Վառվառէ Գ. Եսայեան . . .	2	
Ի յիշատակ Տիկին Եղիսաբէթ Ց. Եսայեանի իւր ամուսնոյն կողմէ . . .	10	
Տիկին Մարթա Գ. Հալէպլեան . . .	1	
	124	28

Այս առթիւ՝ խնդրութեամբ հրատարակելու կ'փութանք նաև թէ Պատ. Ուսումնական խորհրդոյ առաջարին վրայ Ակնի Տիկնանց Հոգատար ընկերութիւնն յանձն առած է նորաչէն վարժարանի գրասեղանները՝ ըստ նոր դրութեան՝ պատրաստել տալու համար, իր արկղէն պէտք եղած դումարն կանխաւ տալ, և ապա, բացման հանդիսին օրն ընդլիք պալտին հատոյքը վարժարանի այլ կարօտեալ համար գործածել։ Նոյնպէս Պատ. Ուսումնական խորհրդոյ խնդրոյն համաձայն՝ Ակնիւ օրիորդաց կրթասէր ընկերութիւնն յօժարակամ յանձն առած է, Պատ. Հոգատար ընկերութեան հետ խորհրդակցելով, պալտին ըստ կարի չքեղ և արդիւնաշատ ընելու մտօք ոչ միայն իր կողմէ ղանապան ընտիր ճաշատեսակներ պատրաստել, այլև չքաւորեան (buffet) մը կազմելու միջոցներն հոգալ և այսպէս աչակցիլ պատուաբեր գործի մը։

Թէ Պատ. Հոգատար և Թէ կրթասէր ընկերութեանց այս կրթասիրական ճեռնարկութիւնն խորին հնորհակալեաց արժանի է և ցոյց կ'տայ որ մեր մէջ կանանց սեռն բարձր գիրք մշակելու կ'ջանայ ամեն ազգային օգտաւէտ ճեռնարկներու մէջ։

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Վ. Սմիթ Անգլիոյ ծաւոները կ՚գրնէ. — Նոյն միջոցին ուրիշ մարդ մը, որու անունն յիշատակութիւնը պէտք չէ մոռնալ, լուիկ մնջիկ և առանց օգնութեան ու դրամի կ՚աշխատէր, և սակայն ինքն իր գլխուն ուրիշներուն չափ գործ կ՚կատարէր։ Ա յս մարդն էր Վ. Սմիթ. Անգլիայի բլուրներու տարբեր կազմութեան և կարգադրութեան վրայ այնքան զարմացաւ որ մտադրեց զանոնք գծել այնպէս որ կարող լինի աշխարհագրներու միջոցաւ նշանակել ճշմիւ թէ խաւերն ինչպէս իրարու վրայ զետեղուած են և թէ ինչ երկիրներէ կ՚անցնին։

Ուսմի իր գործն սկսաւ 1790ին և բոլոր Անգլիա ժուռ եկաւ, շատ անգամ հետիոտն, իր ճամբուն վրայ նշանակելով ժայռերու զանազան դիրքն և անոնց մէջ գտած խեցիներն և ուրիշ բրածոյքը հաւաքելով։ Քիչ ժամանակէն դիտեց նա որ մի քանի բրածոյք որ ստորին դաշտերու մէջ կ՚երևէին, կ՚անհետանային երբ կ՚հասնէր նա անոնց վրայ գտնուղ բրածոյից և թէ ուրիշներ անոնց տեղը կ՚բռնէին։ Ա յս կերպով կարելի եր բրածոյքը գործածել մանաւոր ժայռի մը տարիքը գտնելու, ճիշտ ինչպէս որ դրամի մ՚երեսը կ՚օգնէ մեզ երևան հանելու թէ որ թագաւորին օրովը կոխուած է. իսկ բրածոյից մէջոցաւ գտած պատմութիւնը շատ լաւ կ՚համաձայներ այն բաժանումներու հետ զոր ինք երևան հանած եր ժայռերու վրայէ վրայ ունեցած դիրքէն։ Սմիթ այնքան լաւ հետաքննեց այս ամեն բաներն, որ զանազանեց բրածոյից մէջ անունք որ նոր ծայրեր ունէին, ցոյց տալով որ հողին մէջ թափուելէն ի վեր բնաւ խանգարած չեն, մինչդեռ ուրիշներ չփուած և ջրամաշ եղած էին։ Նոր բրածոյքն, կ՚ըսեր նա, կ՚օգնեն մեզ յայտնելու ժայռին տարիքը, վասն զի անոնք որ չփուած են թերևս աւելի հին գետերու կազմութեամբ մնչուած են։

Ա յս կերպով՝ Վ. Սմիթ հ, մի միայն գիտութեան սի-

ըոյն Համաց և առանց չահու ակնկալութեան, բոլոր Ա֊
գիւիա և վէրջ պարտեցաւ՝ գծելով բոլոր ժայռերն և նը֊
չանակելով անոնց մնայնաւոր յատկութիւնները։ Սմիթ Հ
1799ին հրատարակեց գանազան հողերու կազմութեան և
իրենց բաժանման ցուցակը կամ ազիւսակն ու տեսքը, նոյն֊
պէս ոչն տեղերն ուր անոնք կ'երևին բլուրներու վրայ։
Վերջապէս 1815ին յաջողեցաւ Անգլիոյ երկրաբանական
ա֊խարհացոյցն առարտել, որ այնուհետև բրիտանական
երկրաբանութեան հիմը կազմեց, և որ կ'ամայ երբև մըշ֊
տատև յիշատակարան և ցոյց կ'տայ թէ մի մարդ ինչ մեծ
բաներ կարող է կատարել համբերութեամբ և անձան֊
ձիր ճարտարութեամբ։ Վ. Սմիթհ իրատամբ չհեցաւ
« Անգլիոյ երկրաբանէց հայր ոխոզոն, որ միշտ երեն կ'արուի
և զոր վերնէրն և Հիւդսնի հետ արժանի է յիշատակել՝
իրև երկրաբանական գիտութեան հիմնադիրներէն մին։

Հարցանուած ընութեր։ — Լայ֊ի Սկոտ֊ երկրաբան֊
ութիւն. Լայելի Ցառնոլոգ տարբեր երկրաբանութիւն. Ընդի երկր֊
բանութիւն ընդարձակ գաւառներ. Հիւդսնի երկրի պեսութիւն. Ֆի֊
տոնի Անգլոց վրայ երկրաբանութեան յառաջդման ձգտութիւնը. Վերնէրի
կենսագրութիւնը։ — Ընութեան մարմնաբանութեան. հատ. կբ.

ԳԱՂՈՒԱՆ ԺԴ.

Աշխարհ բնալուծութեան ձգտութիւն — Գիտ — Գերկման — Փրվինգէլ
— Բրնսվէլ — Շել — Ռոսվերջէլ — Լավուազիէ — բնալուծու֊
թեան ֆրանսական դպրոցը։

Մինչդեռ Հընդր և Լինեյ՝ ուրնեւտասներորդ դարուն
վերջերն՝ կենդանի էակներու մասին մեր ունեցած տեղե֊
կութեանց վրայ նոր նոր ծանօթութիւններ կ'աւելցնէին,
մինչդեռ վերնէր և Հիւդսն երկրիս կեղևին պատմութիւ֊
նը կ'որոնէին, խուսմբ մը մարդիկ Անգլիոյ, Ֆրանսայի և
Շուէյտի մէջ այլ և այլ գիտութ կ'ընէին, որով քիմիա֊
բանական գիտութիւնը բոլորովին նոր ուղղութիւն մ'ա֊
ռաւ։ Այս մարդիկ էին Գերկման և Շել՝ Շուէյտի մէջ,

պէտք, Քէվէնտիշ և Բրիսթլի՝ Անգլիոյ մէջ, իսկ Լավուազիէ՝ Ֆրանսայի մէջ։

Լաւ հասկնալու համար թէ ինչ էին այս մարդոց գիւտերն և մեզի ինչ սորվեցուցին, պէտք է յիշել որ մինչև այն ժամանակ քիմիաբանները կ'կարծէին թէ տարրներ կամ պարզ նիւթեր էին օդն ու ջուրը և թէ կարելի չէր զանոնք լուծել կամ ուրիշ աւելի նիւթի մը բաժնել։ Իրաւի Մէյօ արդէն ցոյց տուած էր թէ՝ մթնոլորտն երկաւ կազի կ'բաժնուի, բայց իր փորձերը հինցած ու մոռցուած էին։ Նոյնպէս Հէլս՝ տասնեւութերորդ դարուն սկիզբը շատ կարեւոր հաւաքած էր, բայց չէր կրցած օդէն զանազանել։ Իրօք՝ Ստահլի ֆլոգիստոնը, որու համար կ'ըսուէր թէ այրուած կամ շնչուար մարմիններէ ելած և օդին մէջ տարածուած նիւթ մ'է, անվերջանալի չափոխութեանց պատճառ մ'էր, որով մարդիկ ճշմարտութեան ճամբէն չեղած էին։

Բայց այս ամպոտ դատողութիւնները ցրուելու ժամանակը հասած էր, չորս կարեւոր գիւտին շնորհիւ, որք են, ածխային թթուն, ջրածինը, թթուածինն և բորակածինը։

ՊԼԷՔ ԿԳՏՆԷ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՕԴՆ, ԿԱՄ ԱԾԽԱՑԻՆ ԹԹՈՒՆ, 1756։ — Քիմիաբանութեան մէջ առաջին քայլը ըրաւ Սկովտացի բժիշկ մը, Պլէք անուն, որ ծնաւ ի Պորտօ 1728 ին իրլանտացի և սկովտացի ծնողքէ և բնալուծութեան դասատու եղաւ ի Կլասգօ 1756ին։ Այս քաղքին մէջ շատ պիտանի փորձեր ըրաւ և զանազան բաներէ զատ՝ շատ հետաքրքիր էր գտնելու թէ ինչ պատճառաւ կրաքար այրելով կ'փոխէ իր բնութիւնը։ Եթէ հասարակ կրաքարի կամ կաւիճի կտոր մ'առնուս և ջրի մէջ նետես բնաւ չփոխուիր, մինչև որ քիչ մը թթու չդպիս ջրին մէջ, այն ատեն կրաքարը կ'եռայ և պղպջակներ վեր պիտի ելնեն։ Բայց եթէ նոյն կրաքարէն կտոր մ'առնելով կրակին մէջ այրես, տեսակ մը փոշի կ'գտնայ նէ անուամբ, որ վերսին պղպջակները չպիտի հանէ եթէ վրան թթու թափես, այլ եթէ ջրով խառնես այդ կիրը պիտի ուռի և ատոնիկ պիտի տաքնայ, ինչպէս որ տեսած կ'տեսանենք՝

Երբոր որմնադիրներն չաղախ կ՚պատրաստեն՝ կրաքարէ այրուածէն յառաջ եկած այս վոփոխութիւնն մեծ խնդիր մը դարձած էր քիմիաբաններուն համար. իսկ Պլէք առաջին անգամ չվոխած միացոյց երբ տեսաւ որ կիրն այրելէն ետև առաջի թեթևցած էր, թէպետև չէր կրցած հասկնալ որ քիչ մը ջրէն աւտ ուրիշ բան ալ կորուսած էր, վասն զի ջրին կորուստը բաւական պատճառ մը չէր կրին ծանրութեան կորուստը բացատրելու համար։

Ի վերջէ Պլէք յիշեց որ Տ. Հելը օդը նիւթերէն դուրս հանած և չիշերու մէջ ամիոփած էր. ուստի սկսաւ նկատել թէ արդեօք այրման ատեն կրաքարէն մը ծանր օդ կրաքարէն դուրս ելնելով զայն աւելի չթեթևցներ։ Ա՛յս բանս հաստատելու համար վորձ մ՚ըրաւ, որ այնուհետև միշտ ի գործ դրուած է մաս առ մաս ածխային թթու կազ յառաջ բերելու համար։ Շիշին մէջ մի քանի կտոր կրաքար դրաւ ու, պատ. 40 և անոնց վրայ քիչ մը ջուր և քիչ մը թթու թափեց։ Յետոյ ամրապես խցեց չիշն սունկով և զայն միացուց խողովակի մը ի միջոցաւ մեծ ապակիէ ամանի մը հետ է, որ ջրով լի էր և որուբացց բերանն դարձած կ՚կենար ջրալի դաշտի մը մէջ։ Անմիջապես պղպջակներէ սկսան վեր ելնել կրաքարէն,



Պատկեր 40

կբաժնէ և ընծառնան ջուր ելնող ածխային ընծա։

ա. Շիշ որ կ՚պարունակէ կրաքար կոտորներ ջուր և ընծայ ունի, բ. Միացնող խողովակ, գ. Գլխնվար աման, սառնից ելնող կաղբ վար կ՚իջնէ և ամանին ունի մանելով, դ. փոքր կ՚իջնէ ջուրն ու ամանը կաղմ կ՚լցուցէ։

ԱՁԼ ԵՒ ԱՁԼԻՔ

Զարմանալի պաշտօն մը. — Օրագիր մը կ'ըսէ թէ այլ եւ այլ տեղեր պաշտօններ կան մեծ քաղաքներու մէջ, եւ մին է Բարձի զարթնուն (waker-up): Ան հասարակ զարթուցիչներն ծեր եւ ապիկար մարդիկ են եւ ձմեռն իրենց լուսադէմ եղանակն է: Երբ դիւերներն երկար են եւ տաքուկ անկողնի մ'անուշութիւնն չթողուր որ մարդիկ կանուխ արթննան, զարթնուցիչը ժամն երեքին դուռս կ'ելնէ առտու, եւ ամրոցներու մօտ արուարձաններէ կը դիմէ ուր սովորաբար մշակներ եւ արհեստաւորներ կ'ընակին: Իր պարտքն է արթնցնել անոնք որ այդուն եղնելով իրենց գործին երթալու պարտաւոր են, այնպէս որ եթէ ժամանակին գործատուները չդանուին՝ կ'ամաչեն: Զարթնուցիչն բարձր աղաղակ մ'արձակելով կ'գոչէ և քիչ մը կ'սպասէ որ նայի թէ ձայնը լսելի՞ն, կամ պատուհան մը բացուելով և կամ նեցուկն ձիկ մ'արձակուելով: Մէն մի գործատուր օրը մէկ սու կ'վճարէ զարթնուցիչին իր աշխատութեան փոխարէն: Եւ այսպէս զարթուցիչներու պաշտօնը թէև չատ շահաւէտ չէ, սակայն գործունէութեան գովելի ոգի մը ցոյց կ'տայ, որով այդ մարդիկ մուրացկանութեամբ չեն ապրիր և անկախ դիրք մը կ'պահեն:

Լուսնի ծննդեան օրը. — Բարեշրջութեան ենթադրութիւնն, ինչպէս յայտնի է, այժմեան բնաբանները շատ կ'պաշտպանեն, սակայն ամենքը չեն ընդունիր քնական ընտրողութիւնը տեսութիւնը, որ կապուած է Տարվինի անուան հետ: Այդ ընդունողները միայն իրենց հետաքրքիր լինիլ հետեւեալ դիտողութեանց: Այս գալոցին կենաբաններն քիչ մտածեն պիտի հաւանին հակառակորդի մը հարիւներուն դիւրին չէ որոշել, բայց Պ. Միվարտ Տեսիներս ծնունդ անուն գործին մէջ, նոյն ենթադրութեան վրայ հիմնելով իր տեսութիւնը, կ'յայտնէ թէ 2,500,000,000 տարի պէտք է զանազան էակներու բարեշրջութեան համար՝ երկրի վրայ կենաց ծագումն սկսելով: Բրօֆէսէօր Պլ (որմէ Պ. Տարվին նիւթապէս չտարբերիր) լուսնի հաւանական թուականը կ'հաշուէ 50,000,000 տարիներ. այսպէս ենթադրենք թէ 60 կամ 80 միլիոն տարի առաջ լուսնի դոյութիւնը սկսած է, բայց Պ Պլ դեռ ևս այս բանական չտեսեր, և կենաց ծագումն աւելի հին լինիլ կ'կարծէ: Դարեր անցած պիտի լինին, մինչդեռ երկրի թոյլ և մածուցիկ մակերևոյթին լուսնի միջոցաւ մեծ մակընթացական ալեաց պէս կ'բարձրանար հաստատ հողին և հեղուկ ջրին կազմութենէ առաջ և հեռաւորապէս գործարանական կենաց ծագումէն առաջ: Ուրեմն քիչ մեծ վիհ կայ այս հաշուին և 2,500,000,000 տարիներուն մէջ, որ կարևոր են, կ'ըսուի, բնական ընտրողութեան համար, դիւրին է ըմբռնել: Եթէ այս տեսութեանց մին ճշմարիտ է, հարկաւ միւսը չէ:

ՏԵՂԱԿԱՆ

Վիճակագիր. Քաղաքիս Ս. Աստիանոս եկեղեցւոյ արձանագրութեանց դիւանապետը Արժ. Տ. Աւետիս քահանայ Սարգսեան հաճած է ուղարկել հետեւեալ վիճակագիրն. 1883ին, այս է մէկ տարուան մէջ՝ եղած են քաղաքիս Հայ հասարակութեան մէջ. 41 հարսանիք, 113 ծնունդ և 145 մեռեալ։

Այս վիճակագրին վրայ մեր խորհրդածութիւնն ուրիշ անգամ։

Վաճ. Սինիան ֆալա Աշտանեան. — Այս հարուստաւոր ազգայինն եգիպտոսէն ի դարձին քաղաքս հանգիպելով՝ իր այցելութեամբ բարեացուեց Ս. Մեսրոպեան վարժարանն, ինչպէս նաև Ազգային Աւագնորդարանն, ուր Գնր. Ս. Աւագնորդին հետ կարճատեւ պահակցութիւն մ'ընելէն ետև՝ նոյն օրն ճամբայ ելաւ դէպ ի Կ. Պոլիս։ Վաճ. Սոնփան փաշա եգիպտոսի գործոց կարգադրութեան վրայ հաճելու տեղեկութիւններ հաղորդել խմբագրութեանս, յայտնելով որ Մեսրոպ եպիսկոպոսի ազգային արկղին հասուցած դրամական ահագին ճնշասը տակաւին կ'սպրի ժողովուրդն։ Անհրժեշտ ենք՝ որ յիշալոր պատգամաւորն պիտի գտնուի՝ ի պաշտօնէ հրատարակել եգիպտական գործոց տեղեկագիրը։

Մեծ. Վաճ. Բէշիկթաշ էֆէնդի. — Գրաքննութեան սոյն անուանի պաշտօնատարն՝ որ բաւական ժամանակէ վեր քաղաքս կ'գտնուի, ամսոյս ցին Գնր. Աւագնորդ Հօր այցելութիւն տալէն ետև՝ թէ Հովիսեանց և թէ Մեսրոպեան վարժարաններն չրջելով՝ մի քանի դասատուութեանց ունկնդիր եղաւ, յատկապէս քննեց Գ. դասարանի աշակերտաց տաճկերէնի մէջ ունեցած կարողութիւնն, և քաջալերական խօսքեր ուղղելով իր գոհունակութիւնն յայտնեց։

Փոխառու հարանիք. — Քաղաքիս անուանի և ուսումնասիրաճ փաստաբաններէն Մեծ. Գ. Պուպալի էֆէնտիի մեռութիւնն ընդ Նազելաչուք օր. Մարիամ, դուստր բարեբարոյ Յակոբ էֆէնտիի Սապրիալեան, կատարուեցաւ ամսոյս 12ին։ Քաղաքիս ամեն հասարակութեանց բարձրագոյն կարգերու ներկայացուցիչներն ներկայ կ'գտնուէին հարսանեկան հանդէսին որ Սպարիալեան ու Պուպալի գերդաստաններու ընկերական բարձրագոյն կապակցութեան վայել չքեղութեամբ տեղի ունեցաւ։ Յարատև երջանկութիւն կ'մաղթենք մեր բարեկամ Պուպալի էֆէնտիին և իր աղնուափայլ Նենակային։

Վաքշանոց հանդիսք. — Ամսոյս 16ին կատարուեցաւ Ս Մեսրոպեան վարժարանի մէջ Վարդանանց տօնախմբութիւնն վայելուչ չքով։ Կրօնական արարողութենէ ետք՝ ճառեր կարդացին Մեսրոպեան մի քանի աշակերտներ և Հովհաննեան սանուհիներ, ազգային երգեր՝ դաշնակի ձայնակցութեամբ՝ ոգևորելով այս հանդէսն, որու ներկայ էին ազգային պաշտօնատարներ և երիտ սեռէ ազգայիններ։ Ապա վարժարանաց Տեսուչն պատգային յարմար ատենախօսութիւն մ'ըրաւ, և Գնր. Ս. Աւագ-

Նորդ Հայրն կարճ ու սրտաչարժ յորդորով մը հանդիսը կնքեց։

Գեր. Առաքնորդէ աղետաբերէն. — Կեդրոնական վարչութեան հաւէրին համեմատ՝ Գեր. Մելքիսեդեկ Ս. Մուրատեանց մարտի 3-ին ճամբայ պիտի ելնէ Կ. Պոլսոյ Համագումար ժողովոյ պատրաստելիք կաթոլիկոսական ընտրելեաց որոշման ներկայ դնուելու։

ՓԱՂԱՓԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱ անչէզ կ'շարունակէ իր քաղաքականութիւնը Թօնքինի մէջ և իր զօրքերը Պաքնինհի վրայ կ'քալեն, մինչդեռ Մատակասկարի մէջ դրաւած երկիրն ևս իւրացընելու համար պատրաստութիւն կ'տեսնէ. իսկ իր եալիկոալոնները կ'բողոքեն՝ իրենց մեծ-պահական քարոզներու մէջ որ ժողովուրդն՝ յառաջդիմութեան պատրուակաւ անկրօնութեան կ'դիմեն։ Անգլիա՝ որու խորհրդարանի ընդդիմադիր մասն ի զուր փորձ փորձեց Կլատսդոնի պաշտօնէութիւնն տապալելու՝ իր եալիպտական քաղաքականութիւնն վտահութեան իրր անարժան, անորոշ ամբաստանելով՝ նաւերի աղդու միջոցներով կ'յաջողի Պէյքր վաչայի Դէպի մէջ կրած պարտութեան վրէժը լուծել Կրէհամ զօրապետին ձեռօք, որ Թոխարը կ'ազատէ, մինչդեռ Կօրդօն զօրապետն Խարթումի մէջ այլ և այլ տնօրէնութիւններով Շէյխերը չհնազանդելու կ'ջանայ և Մէհտին Փօրդոֆանի Սուլթան կ'հրատարակէ։ Զանազան օրինաց ծրագիրներ՝ գլխաւորապէս ընտրութեան օրինաց նոր ծրագիրը Խորհրդարանի նկատողութեան կ'առաջարկուին։ Լոնտոնի մէջ պէնմաթ դիւցազուններն նոր նախձիրներ կ'գործեն։ Ռուսիա Մէրվի կ'տիրանայ և Զէրնայէֆ զօրապետն՝ որ Հնդկաստան արշաւելու համար յատուկ ծրագիրներ պատրաստելով Ցարին հաւանութեան ենթարկել ուզեր է, պաշտօնէ կ'արձակուի։ Գերմանիա իր Ռէյխստաքը բանալով՝ կայսերական ճառն եւրոպական խաղաղութիւնն անվրդով պահուելուն իրրև երաշխաւորութիւն՝ մեծ տէրութեանց բարեկամական յարաբերութիւնները կ'ընծայէ։ Ամերիկա՝ որ իրլանտացի Ֆէնիաններու գլխաւոր կայանն է, կ'դատապարտէ պէնոֆդն՝ իրրև վայրենական միջոց իրաւանց տիրանալու, սակայն չղիջանիր՝ Անգլիոյ կառավարութեան խնդրոյն հակառակ, իր երկրին մէջ ընդել այն ընկերութիւններն որ Անգլիոյ դէմ տինամիդեան պատերազմ հրատարակած են։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ

Դրական և գիտական հանդէս ամսեայ

Հրատարակութիւն Ազգային Ընկերութեան

Տէր խմբագիր

ԵՂԻԱ ՏԻՄՈԹԷՈՍԵՑԵԱՆ

Տարեգինն կ. Պոլսոյ համար 2 արծաթ մէճի. գաւառաց համար $2\frac{1}{2}$ արծաթ մէճիու։

ԴՐԱԿԱՆ

և

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Խմբագիր

ԵՂԻԱ ՏԻՄՈԹԷՈՍԵՑԵԱՆ

	Դահեկան
Տարեգին մայրաքաղաքի համար	20
» *գաւառաց համար*	20

Կ. Պոլիս գործակալ. Զարէհ Թորոսեան

Իմիջիր խմբագրութիւն Ա. Մ-ճեայ։

ԸՆՏԱՆԻՔ

Հանդէս կիսամսեայ բարոյական մանաւանդական

Խմբագիր

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՆՃԵԱՆ

Հրատարակիչ

Ա. ԱՇՃԵԱՆ

	Դահեկան
Տարեգին կ. Պոլսոյ համար	30
» *Գաւառաց* »	40
» *Օտար երկիրներու համար*	Ֆրանք 10

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ելը հրատարակուի տեսր առ տեսր 16 երեսէ բաղկացեալ։ — 24 տետրին գինն է 2 արծաթ մէճիտ Պօլսոյ համար։ — 4 րուբլի Ռուսաստանի համար։ — Գաւառաց համար 45 դահ. մէճիտ։ — Մէն մի տետրակին գինն է 100 փարայ։

Բաժանորդագրութեան տեղերն են՝ Կ. Պօլիս, Սուլթան համամ թիւ 14. և մահմուտ փաշա թիւ 239, Ց. Ջէնճիրճիանի գրատունը։

ՆՈՐ ԴԱՐ

Ամենօրեայ

Խմբագիր Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Տարեգինն 10 ռուբլի Թիֆլիս. Իշխիր խմբագրատուն Ա. Մարչ։

ԱՂԲԻՒՐ

Պատկերազարդ

ամսեայ

Եւրոպանեղէ և Դասագիրներէ համար

Խմբագիր

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Տարեգին 3 ռուբլի. կէս տարեգին 2 ռուբլի։

Թիֆլիս գործակալ, Պ. Շահվէրդեան

Կ. Պօլիս » Պ. Ն. Պէրպէրեան

ՎԱՐԺԱՐԱՆ

«Վարժարանի» խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել Հայ հասարակութեանը որ ներկայ Փետրվար ամսից կը հրատարակուի «Վարժարան» ամսաթերթի հրատարակութիւնը և ըստ կը տեսնի նորա № 3 նոյն ուղղութեամբ և դիրքով և նոյն աշխատակիցների օգնութեամբ ուստի հրաւիրում է ցանկացողների բաժանուդ գրուելու դիմել Թիֆլիզ Խմբագրութեան Քարտուղար Գ. Գ. Շահբուտաղեանին հետևեալ հասցէով՝

Rédaction du journal pedagogique « VARJARAN »
(Caucase) TiFLIS

Տարեկան բաժանուդագինն է 5 ռուբլի կանխիկ։

Մանօրութիւն։ — «Վարժարանի» Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր և Յունվար ամիսների ըստ չափաց համարների փոխարէն Խմբագրութիւնը խոստանում է տալ իւր բաժանորդների կամ մի ընդհարցանութեան նոր դիրք, կամ նոյն ամիսների չափին համապատասխան մի համար Յունիս ամսին։

Խմբագիր-Հրատարակիչ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆՑ

Թէ Պօլսէն և թէ գաւառներէն բաժանորդ գրուիլ ցանկացողը Մեծ. ազգայինք պարտին դիմել ԲՈՒՐԱՍՏԱՆի Խմբագրատունը, Պօլիս, Սուլթան Համամ, թիւ 14։

Խմբագիր-Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԳԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ

Արևելեան Մամլոյ տարեգլխին է իւմիրլի համար 3½ արծաթ մէճիտիէ, իսկ դուրսերու համար 4։

Խմբագրութեանս վերաբերեալ ամէն նամակ, ձեռագիր ալէտ է ուղղել առ խմբագիր-Տնօրէն Մ. Մամուրեան, Մեսրոպեան վարժարան։

Անվճար նամակ կամ ծրար չընդունուիր։

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Բաժանորդ դրուիլ ուզողը կրնայ դիմել նաև,

ՀԱՅԻՈՆԻԱ առ խմբագիր-Տնօրէնն։
Կ. ՊՕԼԻՍ Մեծ. Ն. Կ. Պէրպէրեան. Սուլթան համար, Բիւր 14։
ԳԱՀԻՐԷ » Կարապետ Պ. Շէրիճեան։
ԿԵՍԱՐԻԱ » Խորէն Ֆրէնկեան։
ՏՐԱՊԻԶՈՆ » Ս. Էթմէքճեան։
ՀԱԼԷՊ » Կարապետ Գրիգորեան։
ՄԱՐԱՇ » Յ. Տէր Ղազարեան։
ՊՕՓՈՒՇԱՆ Արժ. Տ. Պօղոս Յակոբեան։
ՄԱՐՍԻԼԻԱ Մեծ. Ս. Մէրզայեանց։ M. S. Mirzayantz. MARSEILLE.
ԼՕՆՏՕՆ » Ս. Գ. Սիւքիասեան։ Mrs. S. G. Sukiassian & C°. LONDON.
ՄԱՆՉԷՍԹԷՐ » Յ. Յովակիմեան։ O. Ovaghimian Esqre. MANCHESTER.
ՎԻՆՆԱ » Զ. Բոբովիչ։ M. Z. Popowits. WIEN.
ՆԻՒ-ԵՕՐՔ » Բ. Գուրեան։ M. P. Courian. NEW-YORK.
ԹԻՖԼԻՍ » Շավէրդով։ Agence de journaux de M. Chaverdow. TIFLIS.